

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

**►B**

Երրորդ երկրներից Համայնք ներմուծվող արտադրանքի անասնաբուժական ստուգումների կազմակերպման սկզբունքները սահմանող՝ Խորհրդի 1997թվականի դեկտեմբերի 18-ի 97/78/ԵՀ հրահանգ

(ՊՏ L 024, 30.01.1998 թ., էջ 9)

Փոխարինվել է՝

		Պաշտոնական տեղեկագիր		
		Թիվ	էջ	ամսաթիվ
<b>►M1</b>	<u>Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի թիվ 882/2004 (ԵՀ) կանոնակարգով</u>	L 165	1	30.04.2004թ.
<b>►M2</b>	<u>Խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 20-ի 2006/104/ԵՀ հրահանգ</u>	L 363	352	20.12.2006թ.

Փոխարինվել է՝

<b>►A1</b>		L 236	33	23.09.2003թ.
------------	--	-------	----	--------------

Ուղղվել է՝

<b>►C1</b>	<u>Ուղղում՝ ՊՏ L 191, 28.05.2004թ., էջ 1 (882/2004)</u>
------------	---

**▼B**

**Երրորդ երկրներից Համայնք ներմուծվող արտադրանքի անասնաբուժական ստուգումների կազմակերպման սկզբունքները սահմանող՝ Խորհրդի 1997թվականի դեկտեմբերի 18-ի 97/78/ԵՀ հրահանգ**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 43-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը<sup>1</sup>,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը<sup>2</sup>,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը<sup>3</sup>,

1) քանի որ կենդանիների վարակիչ կամ հպավարակիչ հիվանդությունները կանխարգելելու նպատակով ստուգումների ենթակա կենդանական արտադրանքը կամ կենդանական եւ բուսական ծագում ունեցող արտադրանքը թվարկված է Համաձայնագրի II հավելվածում,

2) քանի որ Համայնքի մակարդակով երրորդ երկրներից ներմուծված կենդանիների նկատմամբ անասնաբուժական ստուգումների մասին սկզբունքների սահմանումն օգնում է երաշխավորելու մատակարարումներն ու ապահովելու շուկայի կայունությունը՝ միեւնույն ժամանակ ներդաշնակեցնելով կենդանիների եւ հանրային առողջության պաշտպանությունն ապահովելու համար անհրաժեշտ միջոցները,

3) քանի որ ներքին շուկայի ձեւավորումը թելադրում է անասնաբուժական ստուգումների համար ընդհանուր սկզբունքներ շարադրելու անհրաժեշտությունը, հաշվի առնելով այն, որ ներքին սահմանային ստուգումները վերացվել են,

<sup>1</sup>ՊՏ C 285, 23.08.1997թ., էջ 7:

<sup>2</sup>ՊՏ C 85, 17.03.1997թ., էջ 76:

<sup>3</sup>ՊՏ C 66, 03.03.1997թ., էջ 43:

4) քանի որ երրորդ երկրներից Համայնք ներմուծվող արտադրանքի անասնաբուժական ստուգումների կազմակերպումը ղեկավարող սկզբունքները սահմանող՝ Խորհրդի 1990 թվականի դեկտեմբերի 10-ի 90/675/ԵՏՀ հրահանգն ընդունելուց հետո, այն կիրառելու ընթացքում տեղի են ունեցել զարգացումներ եւ թարմ փորձառություն է ձեռք բերվել. քանի որ թափանցիկության նկատառումներով Հրահանգում պետք է փոփոխություններ կատարվեն<sup>4</sup>,

5) քանի որ երրորդ երկրներից Համայնք ներմուծված կենդանական ծագում ունեցող ամբողջ արտադրանքի համար պետք է ստեղծվեն ներդաշնակեցված պայմաններ. քանի որ այդ իսկ պատճառով նման արտադրանքի ստուգման համընդհանուր սխեմա պետք է կիրառվի, եւ պետք է անհրաժեշտ փոփոխություններ կատարվեն,

6) քանի որ պետք է սահմանվեն այնպիսի կանոններ, որոնցով բեռները, որոնք ներմուծվել են Համայնք առանց սահմանային հսկողության անցակետ ներկայացվելու, այդպիսի անցակետում անասնաբուժական ստուգում կանցնեն,

7) քանի որ անդամ պետությունները որոշ դեպքերում կարող են ներմուծվելիք արտադրանքի նկատմամբ լրացուցիչ պահանջներ ներկայացնել. քանի որ անդամ պետությունը ստուգումներն անցկացնելիս պետք է հաշվի առնի այդ լրացուցիչ ազգային պահանջները,

8) քանի որ ստուգումների իրականացման վայրի վերաբերյալ հստակ կանոններ պետք է սահմանվեն՝ ծովով կամ օդով այն արտադրանքի փոխաբեռնման համար, որոնց վերջնական նպատակակետը Համայնքն է,

9) քանի որ Համայնքի օրենսդրությամբ պահանջվում է, որ հանրային եւ կենդանիների առողջությունը պաշտպանելու նպատակով, որոշ արտադրանք դիտանցվի Համայնքում

<sup>4</sup>ՊՏ L 373, 31.12.1990թ., էջ 1: 96/43/ԵՀ հրահանգով (ՊՏ L 162, 1.7.1996թ., էջ 1) վերջին անգամ փոփոխված հրահանգ:

դրանց ժամանման վայրից մինչև նշանակման վայր հասնելը. քանի որ այդ պատճառով խիստ կանոններ պետք է սահմանվեն,

10) քանի որ խիստ կանոններ պետք է սահմանվեն՝ ապահովելու համար, որ Համայնքի սահման հասած արտադրանքը, որի վերջնական նպատակակետը Համայնքը չէ, դուրս բերվի Համայնքից,

11) քանի որ արտադրանքը, որը համապատասխանում է Համայնքում ներմուծման նկատմամբ ներկայացված պահանջներին, պետք է առանձնացվի այն արտադրանքից, որը չի համապատասխանում այդ պահանջներին. քանի որ այդ տարբերությունները հաշվի առնելով,՝ ստուգման առանձին համակարգեր պետք է սահմանվեն,

12) քանի որ կենդանական ծագում ունեցող արտադրանքի մատակարարումը ծովային եւ օդային տրանսպորտի անձնակազմի եւ ուղեւորների համար զգալի առետրային կարեւորություն ունի Համայնքում. քանի որ այդ արտադրանքը հաճախ չի համապատասխանում Համայնքի կողմից ներկայացվող պահանջներին. քանի որ, այդ իսկ պատճառով, խիստ կանոններ պետք է սահմանվեն՝ կենդանիների եւ հանրային առողջությունը պաշտպանելու համար,

13) քանի որ երրորդ պետության կողմից մերժված եւ Համայնք վերադարձված Համայնքի արտադրանքը պետք է համարվի Համայնքի պահանջներին այլևս չհամապատասխանող. քանի որ այդ իսկ պատճառով խիստ կանոններ պետք է սահմանվեն՝ կենդանիների եւ հանրային առողջությունը պաշտպանելու համար,

14) քանի որ, հետամուտ լինելով խարդախությունը կանխելու նպատակին, պետք է լրացուցիչ պաշտպանիչ միջոցներ սահմանվեն, եւ խարդախ գործառնությունների ու խախտումների վերացմանն ուղղված ներդաշնակեցված միջոցներ սահմանող դրույթ պետք է նախատեսվի,

15) եւ քանի որ 90/675/ԵՏՀ հրահանգը քանիցս զգալիորեն փոփոխվել է. քանի որ այժմ, երբ անհրաժեշտ է կատարել հետագա փոփոխությունները, այդ Հրահանգը, հստակության եւ նպատակահարմարության նկատառումներից ելնելով, պետք է ուժը կորցրած ճանաչվի եւ փոխարինվի,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

## Հոդված 1

### Գ1

Անդամ երկրներն իրականացնում են երրորդ երկրներից 1-ին հավելվածում թվարկված տարածքներից որեւէ մեկը ներկրված արտադրանքի անասնաբուժական ստուգումները՝ համաձայն սույն Հրահանգի ու «Կերի եւ սննդի մասին օրենսդրության, կենդանիների առողջության ու բարեկեցության մասին կանոնների հետ համապատասխանության ստուգումն ապահովելու նպատակով իրականացվող պետական հսկողության մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի թիվ 882/2004 (ԵՀ) կանոնակարգի<sup>5</sup>:

### ԵԲ

## Հոդված 2

1. Սույն Հրահանգի նպատակով՝ անհրաժեշտության դեպքում կիրառվում են Խորհրդի՝ ներքին շուկան ձեւավորելու համար միջհամայնքային առեստրում անասնաբուժական ստուգումների անցկացման վերաբերյալ 1989թվականի դեկտեմբերի 11-ի 89/662/ԵՏՀ հրահանգի 2-րդ հոդվածում շարադրված եւ ներքին շուկան ձեւավորելու նպատակով<sup>6</sup> միջհամայնքային առեստրում որոշ կենդանիների եւ արտադրանքի նկատմամբ

---

<sup>5</sup>ՊՏ, L 165, 30.04.2004թ., էջ 1:

<sup>6</sup>ՊՏ L 395, 30.12.1989թ., էջ 13: Վերջին անգամ թիվ 92/118/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 62, 15.3.1993թ., էջ 49):

իրականացվող անասնաբուժական եւ կենդանաբուժական ստուգումների անցկացման վերաբերյալ 90/425/ԵՏՀ հրահանգի սահմանումները<sup>7</sup>:

## 2. Բացի դրանից՝

### **▼M1**

ա) «արտադրանք» նշանակում է կենդանական ծագման օժանդակ արտադրանք, որի մասին հղումներ են արված 89/662/ԵՏՀ եւ 90/425/ԵՏՀ հրահանգներում, ինչպես նաեւ մարդու սպառման համար չնախատեսված կենդանական ենթամթերքներին վերաբերող՝ առողջապահական կանոնները սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1774/2002 կանոնակարգում (ԵՀ)<sup>8</sup>, մարդու սպառման համար կենդանական ծագում ունեցող արտադրանքի արտադրման, մշակման, բաշխման ու ներմուծման գործընթացները կարգավորող եւ կենդանիների առողջության կանոնները սահմանող՝ Խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 16-ի 2002/99/ԵՀ հրահանգում<sup>9</sup>, մարդկանց սպառման համար նախատեսված՝ կենդանական ծագում ունեցող արտադրանքի նկատմամբ պաշտոնական վերահսկումը կազմակերպելու հատուկ կանոններ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի թիվ 854/2004 (ԵՀ) կանոնակարգում<sup>10</sup>, այն նաեւ ներառում է 19-րդ հոդվածում նշված բուսական արտադրանքը:

### **▼B**

բ) «փաստաթղթային ստուգում» նշանակում է անասնաբուժական վկայագրի (վկայագրերի) կամ անասնաբուժական փաստաթղթի (փաստաթղթերի), կամ բեռին կից այլ փաստաթղթի (փաստաթղթերի) ուսումնասիրությունը,

գ) «նույնականության ստուգում» նշանակում է ստուգում ըստ արտաքին հատկանիշների, ապահովելու անասնաբուժական վկայագրի (վկայագրերի) կամ անասնաբուժական փաստաթղթի (փաստաթղթերի) կամ անասնաբուժական օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթի (փաստաթղթերի) համապատասխանությունն արտադրանքին,

<sup>7</sup>ՊՏ L 224, 18.08.1990թ., էջ 29: Վերջին անգամ թիվ 92/118/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ:

<sup>8</sup>ՊՏ L 273, 10.10.2002թ., էջ 1: Հանձնաժողովի թիվ 808/2003/ԵՀ կանոնակարգով վերջին անգամ փոփոխված Կանոնակարգ (ՊՏ L 117, 13.5.2003թ., էջ 1):

<sup>9</sup>ՊՏ L 18, 23.01.2003թ., էջ 11:

<sup>10</sup>ՊՏ L 139, 30.04.2004թ.:

- դ) «փաստացի ստուգում» նշանակում է ինքնին արտադրանքի ստուգումը, որը կարող է ներառել փաթեթավորման եւ ջերմաստիճանի ստուգումները, ինչպես նաեւ նմուշառումն ու լաբորատոր փորձաստուգումները,
- ե) «բեռի համար պատասխանատու անձ» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ ով, Համայնքի մաքսային օրենսգիրքը հաստատող՝ Խորհրդի 1992 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 2913/92 (ԵՏՀ) կանոնակարգի դրույթներին համապատասխան<sup>11</sup>, պատասխանատվություն է կրում սույն Կանոնակարգով կարգավորվող այնպիսի տարբեր իրավիճակների զարգացումների համար, որոնցում բեռը կարող է հայտնվել, ինչպես նաեւ նույն կանոնակարգի 5-րդ հոդվածում նշված ներկայացուցիչը, ով սույն Հրահանգում սահմանված ստուգումների ընթացքին հետեւելու պատասխանատվություն է ստանձնում,
- զ) «բեռ» նշանակում է միեւնույն անասնաբուժական վկայագրում (վկայագրերում), կամ անասնաբուժական փաստաթղթում (փաստաթղթերում) կամ անասնաբուժական օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթում (փաստաթղթերում) ներառված նույն արտադրատեսակների որոշակի խմբաքանակը, որոնք փոխադրվում են միեւնույն տեսակի փոխադրամիջոցներով եւ ներմուծվում են միեւնույն երրորդ երկրից կամ այդ երկրի մի որեւէ հատվածից,
- է) «սահմանային հսկողության անցակետ» նշանակում է երրորդ երկրներից 1-ին հավելվածում թվարկված տարածքներից որեւէ մեկի սահմանը հասած արտադրանքի նկատմամբ անասնաբուժական ստուգումներ անցկացնելու համար 6-րդ հոդվածի համաձայն նշանակված եւ հաստատված ցանկացած հսկողության անցակետ:
- ը) «ներմուծում» նշանակում է արտադրանքի ազատ շրջանառություն եւ արտադրանքը ազատ շրջանառության համար բաց թողնելու մտադրություն՝ թիվ 2913/92 (ԵՏՀ) կանոնակարգի 79-րդ հոդվածի իմաստով,
- թ) «արտադրանքի օգտագործման համար սահմանված մաքսային ռեժիմ» նշանակում է արտադրանքի մաքսային ռեժիմը կամ օգտագործումը՝ նշված 2913/92 (ԵՏՀ) կանոնակարգի 4-րդ հոդվածի 15-րդ կետում,

---

<sup>11</sup>ՊՏ L 302, 19.10.1992թ., էջ 1: Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 82/97 կանոնակարգով (ԵՀ) վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 17, 21.1.1997թ., էջ 1):

- ժ) «ներմուծման պայմաններ» նշանակում է Համայնքի օրենսդրության մեջ սահմանված՝ ներմուծվող արտադրանքի նկատմամբ առաջադրված անասնաբուժական պահանջները,
- ժա) «իրավասու մարմին» նշանակում է անդամ պետության կենտրոնական մարմինը, որն իրավասու է իրականացնելու անասնաբուժական հսկողություն, կամ ցանկացած մարմին, որին տվյալ իրավասու մարմինը պատվիրակել է նման իրավասություն:

## **ԳԼՈՒԽ I**

### **ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

#### **Հոդված 3**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ առանց սույն հրահանգով պահանջվող անասնաբուժական ստուգումներն անցնելու՝ երրորդ երկրի որեւէ բեռ չներկրվի 1-ին հավելվածում թվարկված տարածքներից որեւէ մեկը:

2. Անդամ պետություններն ապահովում են 1-ին հավելվածում թվարկված տարածքներից որեւէ մեկը բեռների ներկրումը սահմանային հսկողության անցակետով:

3. Անդամ պետությունները երաշխավորում են, որ բեռների համար պատասխանատու անձինք սահմանային հսկողության անցակետի անասնաբուժական աշխատակազմին նախապես ներկայացնեն բեռների վերաբերյալ տեղեկատվությունը՝ պատշաճորեն լրացնելով, որտեղ անհրաժեշտ է, 5 (1) հոդվածում նշված վկայագիրը, կամ համակարգչային տարբերակով կամ գրավոր տրամադրեն 1-ին պարբերությունում նշված բեռների մանրամասն նկարագրությունը՝ ներառյալ 9-րդ հոդվածում եւ 19 (1) հոդվածում նշված արտադրանքի վերաբերյալ:

Անդամ պետությունները կարող են ստուգել նավերի եւ օդանավերի հայտարարագրերը, նրանց համապատասխանությունը վերոհիշյալ հայտարարություններին եւ փաստաթղթերին:

4. Մաքսային մարմինները, որոնք, ըստ աշխարհագրական դիրքի, պատասխանատու են սահմանային հսկողության անցակետի համար, թույլատրում են բեռների մաքսային ռեժիմը եւ օգտագործումը միայն 5 (1) հոդվածում նշված վկայագրում սահմանված պայմաններին համապատասխան:



5. Սույն հոդվածի կիրառման մանրամասն կանոնները, մասնավորապես՝ անասնաբուժական ստուգումների ենթակա արտադրանքի ցանկը, ընդունվում են 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

#### Հոդված 4

1. Յուրաքանչյուր բեռ ենթարկվում է անասնաբուժական ստուգման 3 (2) հոդվածում նշված սահմանային հսկողության անցակետում անասնաբուժական պետական տեսուչի հսկողության ներքո գտնվող իրավասու մարմնի կողմից՝ համաձայն 6 (1)(բ) հոդվածի:

2. Յուրաքանչյուր բեռի համար անասնաբուժական պետական տեսուչը 3(3) հոդվածում նշված տեղեկատվության հիման վրա պարզաբանում է փնտրում անասնաբուժական ներմուծման ընթացակարգերի համակարգչայնացման մասին (Ռեժիմների փոփոխության ծրագիր) Խորհրդի 1993 թվականի հուլիսի 13-ի 92/438/ԵՏՀ որոշման 1-ին հավելվածում նշված տվյալների բազայում<sup>12</sup>: Ավելին, 1-ին հավելվածում թվարկված տարածքներից որեւէ մեկը ներմուծվող յուրաքանչյուր բեռի համար նա, անհրաժեշտության դեպքում, դիմում է 92/438/ԵՏՀ որոշման II հավելվածի տվյալների բազայի օգնությամբ:

Անասնաբուժական պետական տեսուչն ապահովում է 92/438/ԵՏՀ որոշմամբ նախատեսված տվյալների բազան վարելու համար պահանջվող բոլոր գործառնությունների իրականացումը:

3. Յուրաքանչյուր բեռ, անկախ նրա մաքսային ռեժիմով անցած լինելուց, ենթարկվում է փաստաթղթային ստուգման՝ հաստատելու, որ.

ա) 7(1) հոդվածի վկայագրերում կամ փաստաթղթերում պարունակվող տեղեկատվությունը համապատասխանում է 3(3) հոդվածի համաձայն նախօրոք տրամադրված տեղեկատվությանը,

բ) ներմուծման դեպքում 1-ին հոդվածում նշված վկայագրերում կամ այլ փաստաթղթերում պարունակվող մանրամասներով ապահովվում են պահանջվող երաշխիքային պարտավորությունները:

4. 9-րդ եւ 15-րդ հոդվածներով սահմանված հատուկ դեպքերից բացի՝ անասնաբուժական պետական տեսուչն իրականացնում է հետեւյալ ստուգումները.

<sup>12</sup>ՊՏ L 243, 25.08.1992թ., էջ 27: Վերջին անգամ 1994 թվականի «Անդամակցության ակտ»-ով փոփոխված հրահանգ:

ա) յուրաքանչյուր բեռի նույնականացման ստուգում՝ արտադրանքի համապատասխանությունը կից վկայագրերում կամ փաստաթղթերում պարունակվող տեղեկատվությանը հաստատելու համար; Բեռների խոշոր խմբաքանակներից բացի, որոնք նախատեսված են Խորհրդի 1992 թվականի դեկտեմբերի 17-ի 92/118/ԵՏՀ հրահանգով, որով սահմանվում են Համայնքում իրականացվող այն արտադրանքի առետրի եւ ներմուծման գործընթացները ղեկավարող՝ կենդանիների առողջության համար ներկայացվող պահանջները, որոնք ենթակա չեն 89/662/ԵՏՀ հրահանգի Ա (1) հավելվածում նշված՝ Համայնքի որոշակի կանոններում եւ, ախտածինների մասով՝ Խորհրդի 90/425/ԵՏՀ հրահանգում սահմանված պահանջներին<sup>13</sup>, սույն ընթացակարգը ներառում է.

i) կենդանական ծագում ունեցող արտադրանքը կոնտեյներներով հասնելու դեպքում՝ հաստատում, որ անասնաբուժական պետական տեսուչի (կամ իրավասու մարմնի) կողմից դրված կապարակնիքները, Համայնքի օրենսդրությամբ պահանջվող դեպքերում, վնասված չեն եւ դրանցում պարունակվող տեղեկատվությունը համապատասխանում է կից փաստաթղթում կամ վկայագրում նշվածին:

ii) այլ դեպքերում

արտադրանքի բոլոր տեսակների համար ստուգում, որի նպատակը հավաստելն է, որ ծագման երկիրը եւ ձեռնարկությունը տարբերակող կապարակնիքները, պետական եւ սանիտարական դրոշմվածքներն առկա են եւ համապատասխանում են վկայագրում կամ փաստաթղթում նշվածներին,

Բացի դրանից՝ փաթաթված կամ փաթեթավորված արտադրանքի համար անասնաբուժական օրենսդրությամբ նախատեսված պիտակավորման հատուկ կանոնների ստուգում,

բ) յուրաքանչյուր բեռի փաստացի ստուգում,

i) հաստատելու, որ ապրանքները բավարարում են Համայնքի օրենսդրության պահանջները եւ պիտանի են օգտագործվելու կից վկայագրում կամ փաստաթղթում սահմանված նպատակով:

Այս ստուգումներն իրականացվում են III հավելվածում սահմանված չափորոշիչների համաձայն,

---

<sup>13</sup>ՊՏ L 62, 15.03.1993թ., էջ 49: 96/90/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 13, 16.1.1997թ., էջ 24):

ii) նախքան դրանց իրականացումը՝ մինչև 1999 թվականի հուլիսի 1-ը սահմանվելիք հաճախականություններով՝ օգտագործելով 29-րդ հոդվածում սահմանված ընթացակարգը.

— ցանկացած լաբորատոր փորձաստուգումներ տեղում,

— հնարավորինս արագ վերլուծության համար պահանջվող ցանկացած պաշտոնական նմուշառում:

5. Սույն հոդվածի կիրառման մանրամասն կանոններն ընդունվում են 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

### Հոդված 5

1. Պահանջվող անասնաբուժական ստուգումների ավարտից հետո անասնաբուժական պետական տեսուչը ստուգումների արդյունքները հավաստող վկայագիր է տրամադրում արտադրանքի տվյալ խմբաքանակի համար՝ համաձայն համայնքի սահմանային հսկողության անցակետերում երրորդ երկրներից ներկրված արտադրանքի անասնաբուժական ստուգումների ընթացակարգերը սահմանող՝ Հանձնաժողովի 93/13/ԵՏՀ որոշման Բ հավելվածով նախատեսված<sup>14</sup>, եւ, հարկ եղած դեպքում, 4-րդ պարբերության համաձայն ընդունված մոդելի:

2. 1-ին պարբերության մեջ նշված վկայագիրը կցվում է բեռին՝

— այնքան ժամանակ, քանի դեռ բեռը գտնվում է մաքսային վերահսկողության ներքո, որի դեպքում տվյալ փաստաթուղթը հղում է պարունակում մաքսային փաստաթղթին,

— ներմուծման դեպքում, եթե, մինչև 89/662/ԵՏՀ հրահանգում նշված առաջին ձեռնարկությունը կամ 90/425/ԵՏՀ հրահանգում նշված առաջին նշանակման կենտրոն կամ կազմակերպություն հասնելը.

3. Բեռը բաժանվել է մասերի, դրա յուրաքանչյուր մասի համար կիրառվում են 1-ին եւ 2-րդ պարբերությունների դրույթները:

4. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոնները, ներառյալ Բ հավելվածի համապատասխանեցումը 93/13/ԵՏՀ որոշմանը, ընդունվում են 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

<sup>14</sup>ՊՏ L 9, 15.01.1993թ., էջ 33: Խորհրդի 96/32/ԵՀ որոշմամբ վերջին անգամ փոփոխված որոշում (ՊՏ L 9, 12.1.1996թ., էջ 9):

## Հոդված 6

1. Սահմանային հսկողության անցակետերը պետք է՝

ա) տեղակայված լինեն I հավելվածում թվարկված՝ ներկրման կետի անմիջական հարեանությամբ, եւ մաքսային մարմինների կողմից (ԵՏՀ) թիվ 2913/92 կանոնակարգի 38 (1) հոդվածի առաջին ենթապարբերության (ա) եւ (բ) կետերի համաձայն նշանակված տարածքում:

Այնուամենայնիվ, այն դեպքերում, երբ աշխարհագրական սահմանափակումները (ինչպես օրինակ՝ բեռնաթափման ավիլ կամ անցակետը) պարտադրում են, 2-րդ պարբերությունում սահմանված ընթացակարգի համաձայն, հանդուրժելի է նաեւ սահմանային հսկողության անցակետի տեղակայումը արտադրանքը ներկայացնելու կետից որոշակի հեռավորության վրա, իսկ երկաթուղային տրանսպորտի դեպքում, դրա տեղակայումը իրավասու մարմնի կողմից նշանակված առաջին երկաթուղային կանգառում;

դ) լինեն ստուգումների համար փաստացիորեն պատասխանատու անասնաբուժական պետական տեսուչի ղեկավարության ներքո: Անասնաբուժական պետական տեսուչին կարող է օժանդակել հատուկ վերապատրաստում անցած աշխատակազմ:

Նա ապահովում է, որ 92/438/ԵՏՀ հրահանգի 1(1) հոդվածի երրորդ պարբերության մեջ նշված տվյալների բազաները թարմացվեն:

2. 29-րդ հոդվածում սահմանված ընթացակարգին համապատասխան՝ սույն Հրահանգի հրապարակման պահին գործող սահմանային հսկողության անցակետերի ցանկը կարող է պարբերաբար փոփոխվել եւ լրացվել:

ա) նոր սահմանային հսկողության անցակետ ավելացնելով:

— Անդամ պետության առաջարկով, այն բանից հետո, երբ իրավասու մարմինը ստուգել է դրա համապատասխանությունը սույն հրահանգի II հավելվածի, եւ երրորդ երկրներից ներկրված արտադրանքի անասնաբուժական ստուգումների համար պատասխանատու Համայնքի սահմանային հսկողության անցակետերի հաստատման պահանջները սահմանող՝ Հանձնաժողովի 1992 թվականի նոյեմբերի 3-ի 92/525/ԵՏՀ որոշման պահանջներին<sup>15</sup>:

<sup>15</sup> 15.)ՊՏ L 331, 17.11.1992թ., էջ 16:

—անցնելով Հանձնաժողովի կողմից անդամ պետության իրավասու մարմնի հետ համագործակցությամբ իրականացվող տեսչական ստուգումը,

բ) դադարեցնելով սահմանային հսկողության անցակետի գործունեությունը, երբ իրավասու մարմնի կողմից իրականացված ստուգման ժամանակ պարզվել է, որ այն չի համապատասխանում II հավելվածում շարադրված պայմաններին, կամ 23-րդ հոդվածով նախատեսված ստուգումներից հետո պարզվել է, որ անդամ պետությունը ողջամիտ ժամկետներում հաշվի չի առել այս ստուգման եզրակացությունները, հատկապես այն դեպքերում, երբ ստուգումները հանրության եւ կենդանիների առողջության համար լուրջ ռիսկ են պարունակում:

3. Անդամ պետությունը պետք է, լուրջ դեպքերում, մասնավորապես՝ հանրային եւ կենդանիների առողջության նկատառումներով, կասեցնի իր տարածքում տեղակայված սահմանային հսկողության անցակետի հաստատումը: Այն անմիջապես տեղեկացնում է Հանձնաժողովին եւ մյուս անդամ պետություններին կասեցման մասին եւ տալիս է հիմնավորումներ իր կողմից կայացրած որոշման համար: Սահմանային հսկողության անցակետը ցանկի մեջ կվերաընդգրկվի միայն 2 (ա) պարբերության համաձայն:

4. Հանձնաժողովը կազմում եւ հրապարակում է սահմանային հսկողության անցակետերի հաստատված ցանկը, ներառելով այն անցակետերը, որոնց հաստատումը ժամանակավորապես կասեցվել է:

5. Նախքան 2 (ա) պարբերության համաձայն որոշումների ընդունումը՝ 90/675/ԵՏՀ հիմնական հրահանգի համաձայն կազմված ցանկը կմնա ուժի մեջ, չսահմանափակելով 3-րդ պարբերությամբ նախատեսված հանգամանքները:

6. Սույն հոդվածի կիրառման մանրամասն կանոններն ընդունվում են 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

## **Հոդված 7**

1. I հավելվածի ցանկում ընդգրկված որեւէ մի տարածք ներմուծելու համար նախատեսված յուրաքանչյուր բեռին կից, անասնաբուժական օրենսդրության պահանջներին համապատասխան, ներկայացվում է անասնաբուժական վկայագրի կամ անասնաբուժական փաստաթղթերի կամ այլ փաստաթղթերի բնօրինակներ: Վկայագրերի կամ փաստաթղթերի բնօրինակները պահվում են սահմանային հսկողության անցակետում:

2. Չսահմանափակելով 10-րդ հոդվածը՝ երրորդ երկրից I հավելվածում նշված որեւէ մի տարածք ներմուծելու համար նախատեսված արտադրանքի յուրաքանչյուր բեռ պետք է անցնի նույնականացման եւ փաստացի ստուգում, ինչպես նախատեսված է 4 (4) հոդվածով:

3. Մաքսային իշխանությունները չեն թույլատրի ապրանքների ներմուծումը, քանի դեռ, այնքանով, որքանով դա չի հակասում մաքսային կանոնակարգին եւ 10 (2) ու (3) հոդվածի ու 18-րդ հոդվածի համաձայն ընդունված հատուկ դրույթներին, չեն ներկայացվել ապացույցներ այն մասին, որ համապատասխան անասնաբուժական ստուգումների արդյունքները բավարար են, որ 5 (1) հոդվածի համաձայն համապատասխան վկայագիրը տրամադրվել է, եւ որ իրավասու մարմինը երաշխավորում է, որ **►M1** **►C1** թիվ 882/2004 (ԵՏ) կանոնակարգում նշված ստուգումների ծախսերը ◀ ◀ վճարվել են կամ վճարվելու են այդ հրահանգի դրույթների համաձայն:

4. Եթե բեռը համապատասխանում է ներմուծման պայմաններին, անասնաբուժական պետական տեսուչը շահագրգիռ անձին տրամադրում է վկայագրերի կամ փաստաթղթերի բնօրինակների վավերացված պատճենները եւ, 5 (1) հոդվածի համաձայն, թողարկում է վկայագիր, որում սահմանային հսկողության անցակետում անասնաբուժական ստուգումների հիման վրա հայտարարվում է, որ բեռը համապատասխանում է այդ պայմաններին:

5. 89/662/ԵՏ< եւ 90/425/ԵՏ< հրահանգներում նշված եւ սույն Հրահանգի I հավելվածում թվարկված որեւէ մի տարածքից 3-րդ պարբերության այս հոդվածով ներմուծման համար թույլատրված արտադրանքի առետուրն իրականացվում է սույն Հրահանգի, մասնավորապես՝ սույն Հրահանգի II գլխի կանոնների համաձայն:

6. Սույն հոդվածի կիրառման մանրամասն կանոններն ընդունվում են 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

## Հոդված 8

1. Եթե՝

—նախատեսված է արտադրանքը ներմուծել անդամ պետության կամ Համայնքի օրենսդրության շրջանակներում հատուկ պահանջներ ձեռք բերած տարածք,

– այն պահի դրությամբ, երբ փոխադրամիջոցը մեկնում է սահմանային հսկողության անցակետից, նմուշները վերցված են, բայց արդյունքները դեռ հայտնի չեն,

— հատուկ նպատակներով թույլատրված ներմուծումներ են ներգրավված՝ համայնքի օրենսդրությամբ նախատեսված դեպքերում,

1. լրացուցիչ տեղեկատվություն պետք է հաղորդվի նշանակման վայրի իրավասու մարմնին 90/425/ԵՏՀ հրահանգում նշված ANIMO ցանցի միջոցով:

2.1-ին պարբերության 1-ին եւ 3-րդ պարբերություններում նշված եւ այլ անդամ պետություն ներկրման ենթակա յուրաքանչյուր բեռ անցնում է 4(3) եւ (4) հոդվածով նախատեսված նույնականության եւ փաստացի ստուգումներն այն անդամ պետության տարածքում գտնվող սահմանային հսկողության անցակետում, որտեղ այդ արտադրանքը ներմուծվել է, մասնավորապես՝ անդամ պետության կամ նշանակման վայրի համար կիրառելի Համայնքի կողմից սահմանված կանոններին տվյալ արտադրանքի համապատասխանությունն ստուգելու համար: Այնուամենայնիվ, որսամիս տվող մանր, մորթիավոր վայրի կենդանիները, որոնք ներկրվել են առանց մաշկազերծման, կենդանի կենդանիների եւ կենդանական արտադրանքում որոշակի նյութերի եւ մնացորդների դիտանցման միջոցառումների մասին 1996 թվականի ապրիլի 29-ի 96/23/ԵՀ հրահանգով կենդանիների առողջության եւ մնացորդների հետազոտությունների ենթարկվելուց բացի , անցնում են նույնականության կամ փաստացի ստուգում<sup>16</sup>, որը պետք է իրականացվի Խորհրդի՝ որսամիս տվող մանր կենդանիներին սպանելու եւ որսամիսը նշանակման ձեռնարկություն, (որտեղ այն պետք է առաքվի մաքսային վերահսկողության ներքո, սույն հոդվածի 4-րդ պարբերության 1-ին պարբերությի համաձայն եւ 5 (1) հոդվածում նշված վկայագրին համապատասխան), շուկայահանելու հետ կապված՝ «Հանրային եւ կենդանիների առողջության մասին» 1992թվականի հունիսի 16-ի հրահանգի<sup>17</sup> համաձայն:

Ստուգումների արդյունքները պետք է ուղարկվեն արտադրանքի ներմուծման սահմանային հսկողության անցակետի համար պատասխանատու անասնաբուժության գծով իրավասու մարմին: Ստուգումների արդյունքներից կախված՝ անհրաժեշտության դեպքում կիրառվում են 24-րդ հոդվածով սահմանված միջոցները:

<sup>16</sup> 16)ՊՏ L 125, 23.05.1996թ., էջ 10:

<sup>17</sup>ՊՏ L 268, 14.09.1992թ., էջ 35: 96/23/ԵՀ հրահանգով (ՊՏ L 125, 23.5.1996թ., էջ 10) վերջին անգամ փոփոխված հրահանգ:

3. Անդամ պետությունները երաշխավորում են, որ եթե 1-ին պարբերության 1-ին եւ 3-րդ պարբերություններում նշված արտադրանքը ներկրվել է նպատակակետ չհանդիսացող անդամ պետություն, նրանք կձեռնարկեն բոլոր միջոցները՝ իր նշանակման երկիր նշված բեռի հասնելն ապահովելու համար:

4. Արտադրանքը, որոնք, համաձայն Համայնքի օրենսդրության, պետք է դիտանցման ենթարկվեն ժամանման կետի սահմանային հսկողության անցակետից մինչեւ նպատակակետ հանդիսացող վայրի ձեռնարկություն հասնելը, ուղարկվում են հետեւյալ պայմաններով.

— համապատասխան բեռն առաքվում է ժամանման կետի սահմանային հսկողության անցակետից մինչեւ նպատակակետ հանդիսացող վայրի ձեռնարկությունը իրավասու մարմնի վերահսկողության ներքո՝ իրավասու մարմինների կողմից կնքված հերմետիկ ցիստեռներով եւ կոնտեյներներով: 1-ին պարբերության երրորդ պարբերությունում նշված արտադրանքը մնում է մաքսային վերահսկողության ներքո այնքան ժամանակ, քանի դեռ չի հասել նպատակակետ վայր՝ համաձայն T5 ընթացակարգի, որը նախատեսված է Հանձնաժողովի 1993 թվականի հուլիսի 2-ի թիվ 2454/93 կանոնակարգով, որի մեջ շարադրված են Համայնքի մաքսային օրենսգիրքը սահմանող՝ Խորհրդի (ԵՏՀ) թիվ 2913/92 կանոնակարգը կիրառելու դրույթները<sup>18</sup> եւ 5 (1) հոդվածով տրամադրված վկայագրին համապատասխան, որտեղ նշվում է արտադրանքի համար թույլատրված նպատակակետ վայրը եւ, անհրաժեշտության դեպքում, արտադրանքի մշակման համար նախատեսված եղանակը:

— համապատասխան սահմանային հսկողության անցակետի անասնաբուժական պետական տեսուչը ANIMO ցանցի միջոցով տեղեկացնում է նպատակակետ հանդիսացող վայրի ձեռնարկության անասնաբուժության գծով պատասխանատու իրավասու մարմնին արտադրանքի ծագման եւ նպատակակետ հանդիսացող վայրի մասին,

— նպատակակետ հանդիսացող վայրի ձեռնարկությունում արտադրանքը ենթարկվում է Համայնքի համապատասխան օրենսդրության մեջ սահմանված մշակման:

Նպատակակետ հանդիսացող վայրի անասնաբուժական պետական տեսուչը, կամ 92/118/ԵՏՀ հրահանգի I հավելվածի 10-րդ գլխում նախատեսված դեպքերում, միջանկյալ

---

<sup>18</sup>ՊՏ L 253, 11.10.1993թ., էջ 1: Թիվ 1427/97 կանոնակարգով (ԵՀ) վերջին անգամ փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 196, 24.07.1997թ., էջ 31):



պահեստի համար պատասխանատու անասնաբուժական պետական տեսուչը, նպատակակետ հանդիսացող վայրի ձեռնարկության կամ միջանկյալ պահեստի ղեկավարության կողմից տեղեկացվում է արտադրանքի՝ իրենց նպատակակետ ժամանման մասին, եւ 15-օրյա ժամկետում դրա մասին ծանուցում է սահմանային հսկողության անցակետի անասնաբուժական պետական տեսուչին, ով իրեն տեղեկացրել էր առաքման մասին: Նա անցկացնում է կանոնավոր ստուգումներ՝ համոզվելու համար, որ արտադրանքը հասել է նպատակակետ հանդիսացող վայրի ձեռնարկություն, մասնավորապես՝ ստուգելով մուտքային գրառումները:

5. Եթե, առանց սահմանափակելու 20-րդ հոդվածի դրույթները, սահմանային հսկողության անցակետի իրավասու մարմինն ապացույց է ներկայացվել, որ արտադրանքը, որը, ըստ հայտարարության, նախատեսված է եղել հաստատված ձեռնարկությունում ընդունելու համար, չի հասել իր նպատակակետ վայրը, իրավասու մարմինը համապատասխան միջոցներ է ձեռնարկում բեռի համար պատասխանատու անձի նկատմամբ:

6. Անդամ պետությունները, Համայնքի համապատասխան օրենսդրության համաձայն, Հանձնաժողով են ներկայացնում նշված արտադրանքի ընդունման համար հաստատված ձեռնարկությունների ցանկը՝ 4-րդ պարբերությամբ սահմանվածի համաձայն:

Եթե ձեռնարկությունը ծանուցման համար ներկայացվող պահանջները չի պահպանում, ապա անդամ պետությունը կարող է չեղյալ համարել իր հաստատումը եւ, կրած ռիսկի բնույթին համապատասխան, կիրառել անհրաժեշտ պատժամիջոցներ: Հանձնաժողովը հրապարակում է հաստատված ձեռնարկությունների ցանկը եւ կատարում է այդ ցանկի թարմացումներն ու այդ թարմացումների մասին տեղեկությունների հաղորդումը մյուս անդամ պետություններին:

7. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոնները, որոնք սահմանվում են մաքսային մարմինների հետ խորհրդակցելուց հետո, ընդունվում են 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

## **Հոդված 9**

1. I հավելվածում թվարկված տարածքներ ներմուծման համար նախատեսված այն բեռները, որոնք ժամանում են մեկ սահմանային հսկողության անցակետ, սակայն, ըստ նախատեսվածի, պետք է ժամանեն նույն տարածքում կամ մեկ այլ անդամ պետության

տարածքում տեղակայված այլ անցակետ, նպատակակետ հանդիսացող վայրի սահմանային հսկողության անցակետում պետք է ենթարկվեն նույնականության կամ փաստացի ստուգման՝ պայմանով, որ բեռնափոխադրումը լինի ծովային կամ օդային ճանապարհով: Ներկրման սահմանային հսկողության անցակետում տեղի է ունենում հետեյալ ընթացակարգը.

- ա) բեռն անմիջապես կամ նավամատուցում կամ կառամատուցում բեռնաթափվելուց հետո, (բ) կետով սահմանված նվազագույն ժամկետից ավելի կարճ ժամկետով փոխադրվում է նույն նավահանգստի կամ օդանավակայանի մաքսային տարածքի մեկ ինքնաթիռից մյուսը կամ մեկ նավից մյուսը. բեռի համար պատասխանատու անձը դրա մասին տեղեկացնում է իրավասու մարմնին: Այն կարող է տվյալ բեռին կից վկայագրի կամ անասնաբուժական փաստաթղթի կամ այլ փաստաթղթի բնօրինակի կամ դրա վավերացված պատճենի հիման վրա իրականացնել արտադրանքի փաստաթղթային ստուգում՝ հատկապես այն դեպքերում, երբ կենդանիների կամ հանրային առողջությանը վտանգ է սպառնում:
  - բ) եթե բեռն այլ կերպ է բեռնաթափվում, այն պետք է.
  - i) իրավասու մարմնի վերահսկողության ներքո պահուստավորվի առավելագույն եւ նվազագույն ժամկետներով եւ 2-րդ պարբերությունում շարադրված ընթացակարգի համաձայն սահմանվող պայմաններով, այն նավահանգստի կամ օդանավակայանի մաքսային տարածքում, որտեղ այն գտնվում է՝ ծովային կամ օդային ճանապարհով մեկ այլ սահմանային հսկողության անցակետ ուղարկվելուց առաջ:
  - ii) (ա) կետում նշված փաստաթղթերի հետ կապված ենթարկվի փաստաթղթային ստուգման,
  - iii) չսահմանափակելով 20-րդ հոդվածի գործողությունը՝ ենթարկվի բացառապես նույնականության եւ փաստացի ստուգման, եթե առկա է հանրային կամ կենդանիների առողջության որեւէ վտանգ:
2. Սույն հոդվածի կիրառման վերաբերյալ մանրամասն կանոններն ընդունվում են ըստ 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի:
3. Խորհուրդը, գործելով որակյալ մեծամասնությամբ, Հանձնաժողովի առաջարկի հիման վրա, սույն հոդվածի դրույթները կարող է տարածել նաեւ երկաթուղով արտադրանքի տարանցման վրա:

## Հոդված 10

1. Անդամ պետության խնդրանքով, պարտադիր օժանդակ տեղեկատվության հիման վրա կամ գործելով սեփական նախաձեռնությամբ, Հանձնաժողովը կարող է 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան, որոշել որոշակի պայմաններում եւ, մասնավորապես, նախորդ սուուգումների արդյունքների հիման վրա, կրճատել փաստացի սուուգումների հաճախականությունն այն արտադրանքի նկատմամբ, որոնց ներմուծման պայմանները ներդաշնակեցվել են, այսինքն այն արտադրանքի, որը բավարարում է հետեւյալ երեք պայմանը.

ա) ծագում են երրորդ երկրներից կամ երրորդ երկրների այն տարածաշրջաններից, որտեղ Համայնքի I հավելվածում թվարկված տարածքներ ներմուծման համար նախատեսված արտադրանքի ծագման վայրում սուուգումների կապակցությամբ առողջության գծով բավարար երաշխիքներ են տրամադրվում:

բ) այնքանով, որքանով պահանջվում է համայնքի օրենսդրությամբ, այդ արտադրանքն արտադրվել է այն ձեռնարկություններում, որոնք ներառված են Համայնքի կանոնների համաձայն կազմված ձեռնարկությունների ցանկում ►M1 ►C1 ►M1 ►C1 կամ, այն ձեռնարկությունների դեպքում, որոնք հաստատված են՝ համաձայն Խորհրդի 1995 թվականի հունիսի 22-ի 95/408/ԵՀ հրահանգի, որը սահմանում է միջանկյալ ժամանակահատվածի համար այն ձեռնարկությունների պայմանական ցանկի կազմման պայմանները, որոնք տեղակայված են այն երրորդ երկրներում, որոնցից անդամ պետությունները լիազորված են ներկրելու կենդանական ծագում ունեցող որոշակի արտադրանք, ձկնաբուծական արտադրանք կամ կենդանի երկփեղկ փափկամորթներ<sup>19</sup> ◀ ◀ ◀ ; այն ձեռնարկությունում, որը Համայնքի կամ ազգային տեսչական սուուգում է անցել.

գ) տվյալ արտադրանքի համար թողարկվել են ներմուծման վկայագրեր:

2. Նախքան տվյալ երրորդ երկրի արտադրանքի նկատմամբ այսպիսի շեղումների հատկացման համար առաջարկ ներկայացնելը՝ Հանձնաժողովը հաշվետվություն է ներկայացնում տվյալ երկրի Անասնաբուժության գծով մշտական կոմիտեին՝ հաշվի առնելով հետեւյալը.

---

<sup>19</sup>ՊՏ L 243, 11.10.1995թ., էջ 17: Խորհրդի 97/34/ԵՀ որոշմամբ վերջին անգամ փոփոխված որոշում (ՊՏ L 13, 16.1.1997թ., էջ 33):

- ա) տվյալ երրորդ երկրի կողմից իր ամբողջ տարածքի կամ այդ տարածքի մի մասի համար Համայնքի պահանջներին համապատասխանելու վերաբերյալ տրամադրվող երաշխիքները՝ ներառյալ մնացորդների ստուգումների մասով երաշխիքները,
- բ) տվյալ երկրի կենդանիների առողջական վիճակը,
- գ) երկրում առողջության ընդհանուր իրավիճակի մասին տեղեկատվությունը,
- դ) երրորդ երկրի կողմից հիվանդության վերահսկման եւ դրա դեմ պայքարի միջոցների բնույթը,
- ե) անասնաբուժական կամ այլ համապատասխան ծառայությունների կառուցվածքները, հմտությունները, անկախությունը եւ որակավորումները,
- զ) Համայնքի օրենքում արտադրության հիգիենայի հետ կապված՝ նվազագույն ստանդարտներին համապատասխանությունը,
- է) արտադրանքի կամ արտադրատեսակների եւ դրա (դրանց) առնչվող առողջության պոտենցիալ ռիսկերը,
- ը) որոշ նյութերի թույլտվության կանոնները եւ Խորհրդի՝ անասնապահության մեջ որոշակի հորմոնալ կամ հակաթիրոիդային ազդեցությամբ նյութերի կամ β համազդիչների օգտագործումն արգելելու մասին 1996 թվականի ապրիլի 29-ի 96/22/ԵՀ հրահանգով եւ 96/23/ԵՀ հրահանգով սահմանված պահանջներին համապատասխանությունը<sup>20</sup>,
- թ) Համայնքի կամ ազգային վերահսկողների ստուգայցերի արդյունքները,
- ժ) ներմուծման հետ կապված ստուգումների արդյունքները,
- ժա) ներմուծվող արտադրանքի բնույթից, դրանք ներկայացնելուց կամ փոխադրամիջոցի տեսակից բխող ռիսկի վերլուծությունը:

3. Չսահմանափակելով 1-ին պարբերության դրույթները ստուգումների հաճախականության կրճատումների մասին, բանակցություններ կարող են վարվել Համայնքի եւ երրորդ երկրի միջեւ փոխադարձության սկզբունքի հիման վրա կնքված համաձայնության ներքո:

Այդօրինակ կրճատումները պետք է ընդունվեն 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

---

<sup>20</sup>ՊՏ L 125, 23.05.1996թ., էջ 3:

4. Սույն հոդվածի կիրառման վերաբերյալ մանրամասն կանոններն ընդունվում են 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

## **Հոդված 11**

### **▼A1**

1. Անդամ պետությունը, ելնելով բոլոր այն անդամ պետությունների շահերից, որոնց միջով արտադրանքի տարանցումը պետք է իրականացվի, թույլատրում է բեռների տարանցումը երրորդ երկրի ներսում կամ մեկ երրորդ երկրից մյուսը, եթե.

### **▼B**

ա) այդ բեռներն այնպիսի երկրից են, որոնց արտադրանքի մուտքը 1-ին հավելվածում թվարկված տարածքներ արգելված չէ, եւ նախատեսված են մեկ այլ երրորդ երկիր ներմուծելու համար: Իրավասու մարմինը կարող է հրաժարվել 9(1)(ա) հոդվածի համաձայն բեռների մեկ օդանավից մյուսը, կամ մեկ նավից մյուսը միեւնույն նավահանգստում կամ օդանավակայանում փոխաբեռնման պահանջից, նպատակ ունենալով բեռները վերաուղարկելու առանց I հոդվածում թվարկված տարածքներ լրացուցիչ կանգառների՝ հետեւելով 4-րդ պարբերության համաձայն սահմանվող ընդհանուր չափորոշիչներին:

բ) բեռների այսօրինակ տարանցումը նախկինում թույլատրվել է այն անդամ պետության անասնաբուժական պետական տեսուչի կողմից, որտեղ բեռն առաջինն է հասել I հոդվածում սահմանված տարածքներից որեւէ մեկը:

գ) բեռի համար պատասխանատու անձը նախօրոք պարտավորվում է վերստանալ բեռի նկատմամբ սեփականության իր իրավունքը, եթե տվյալ արտադրանքը մերժվի եւ տնօրինել այն 17-րդ հոդվածին համապատասխան:

2.1-ին պարբերության մեջ նշված թույլտվությունը ենթակա է համապատասխանելու հետեւյալ պայմաններին.

ա) սահմանային հսկողության անցակետ տարանցման համար ներկայացված բեռներին կից ներկայացվում են 7(1) հոդվածում նշված փաստաթղթերը, անհրաժեշտության դեպքում, նաեւ դրանց վավերացված պատճենները:

բ) արտադրանքի որոշակի խմբաքանակը պետք է ներկայացվի վերը նշված սահմանային հսկողության անցակետ փաստաթղթային եւ նույնականացման ստուգում անցնելու համար:

Ծովային կամ օդային տրանսպորտի համար իրավասու անասնաբուժության գծով մարմինը կարող է թույլատրել փաստաթղթային կամ նույնականության ստուգումներից շեղում այն դեպքում, եթե բեռը.

—չի բեռնաթափվել այս պարագայում, չհակասելով 20-րդ հոդվածին, փաստաթղթային ստուգումը կարող է սահմանափակվել նավաբեռի հայտարարագրի ուսումնասիրությամբ:

—9(1)(ա) հոդվածում շարադրված կարգով փոխաբեռնվել է մեկ օդանավից մյուսը, կամ մեկ նավից մյուսը միեւնույն նավահանգստի կամ օդանավակայանի մաքսային տարածքում.

բացառիկ դեպքերում, երբ առկա են հանրային կամ կենդանիների առողջությունը վտանգելու ռիսկեր կամ խախտումների կասկածներ, լրացուցիչ փաստացի ստուգումներ պետք է իրականացվեն:

գ) ցամաքով, երկաթուղով կամ ջրային ճանապարհով I հավելվածում թվարկված տարածքներով անցնելու դեպքում այդպիսի բեռը.

—մաքսային վերահսկողության ներքո՝ համաձայն (ԵՏՀ) թիվ 2913/92 կանոնակարգով սահմանված՝ Համայնքից ելքի կետի վերաբերյալ T1 ընթացակարգի՝ 2(ա) կետով պահանջվող փաստաթղթի եւ 5(1) հոդվածում նշված բեռի՝ Համայնքից դուրս գալու սահմանային անցակետի մասին հավաստող վկայագրի հետ,

—առանց բեռնաթափվելու կամ մասերի բաժանվելու, փոխադրվում է լիազորված մարմինների կողմից կնքված կոնտեյներներով կամ տարաներով: Փոխադրման ժամանակ բեռների մշակում չի թույլատրվում:

—դուրս են բերվում Համայնքից սահմանային անցակետի միջոցով մուտքի սահմանային անցակետը լքելուց հետո առավելագույնը 30 օրվա ընթացքում, բացի այն դեպքերից, երբ ընդհանուր բացառություն է շնորհվում 4-րդ պարբերությամբ սահմանված ընթացակարգի հիման վրա, որտեղ հաշվի են առնված աշխարհագրական հեռավորության պատշաճորեն հիմնավորված դեպքերը:

դ) բեռնափոխադրման թույլտվություն տված անասնաբուժական պետական տեսուչը ANIMO ցանցի միջոցով սահմանային հսկողության անցակետի անասնաբուժական պետական տեսուչին տեղեկացնում է արտադրանքի դուրսբերման մասին;

ե) Ելքի սահմանային հսկողության անցակետի անասնաբուժության գծով պետական տեսուչը 5(1) հոդվածում նշված վկայագրի վրա նշում է, որ բեռները դուրս են բերվել Համայնքից եւ ֆաքսով կամ հաղորդակցման այլ միջոցներով փաստաթղթի պատճենն ուղարկում է մուտքի սահմանային հսկողության անցակետ:

Եթե մուտքի սահմանային հսկողության անցակետի անասնաբուժական պետական տեսուչը 2 (գ) կետի երրորդ պարբերությամբ նախատեսված ժամանակահատվածում չի տեղեկացվել արտադրանքը համայնքից դուրս բերվելու մասին, նա այդ հարցի քննությունը փոխանցում է մաքսային իրավասու մարմնին, որը, ինչպես հարկն է, քննում է այն՝ արտադրանքի փաստացի նշանակման վայրը որոշելու համար:

3. Սույն հոդվածում նշված գործողություններից առաջացած բոլոր ծախսերը կրում է բեռի համար պատասխանատու անձը կամ նրա ներկայացուցիչը, առանց անդամ պետության կողմից փոխհատուցում ստանալու՝ համաձայն 85/73/ԵՏՀ հրահանգի 1-ին հոդվածից բխող սկզբունքների:

4. 3. Սույն հոդվածի կիրառման, մասնավորապես մուտքի եւ ելքի սահմանային հսկողության անցակետերի միջեւ տեղեկատվության փոխանակման համար մանրամասն կանոններն ընդունվում են 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

## **Հոդված 12**

1. Երրորդ երկրից բերվող եւ ազատ տնտեսական գոտու, ազատ մաքսային պահեստի կամ մաքսային պահեստի համար նախատեսված բեռները կարող են, թիվ 2913/92 (ԵՏՀ) կանոնակարգի համաձայն, ընդունվել միայն այն դեպքում, երբ բեռի համար պատասխանատու անձը նախօրոք նշել է, որ տվյալ արտադրանքը վերջնականորեն ազատ շրջանառվելու է | հավելվածում թվարկված տարածքներից որեւէ մեկում, կամ այդ արտադրանքի համար առկա է մեկ այլ վերջնական սպառման վայր կամ, որ այդ արտադրանքը համապատասխանում է ներմուծման պայմաններին:

Եթե արտադրանքի վերջնական սպառման վայրը հստակորեն նշված չէ, ապա համարում են, որ այն նախատեսված է ազատ շրջանառվելու | հավելվածում նշված տարածքներից որեւէ մեկում:

2. Բեռները ներկայացնելու սահմանային հսկողության անցակետում անցնում են փաստաթղթային, նույնականության եւ փաստացի ստուգում՝ արտադրանքի համապատասխանությունը վերոնշյալ ներմուծման պայմաններին որոշելու համար:

Այնուամենայնիվ, բացառությամբ այն դեպքերի, երբ կենդանիների եւ հանրային առողջությանը վտանգ է սպառնում, փաստացի ստուգումը կարող է նաեւ չպահանջվել, եթե փաստաթղթային ստուգումից պարզվում է, որ արտադրանքը չի բավարարում Համայնքի պահանջները:

Այդպիսի բեռներին կից ներկայացվում են 7(1) հոդվածով պահանջվող փաստաթղթերը: Դրանց անհրաժեշտության դեպքում կցվում են այդ փաստաթղթերի վավերացված պատճենները:

3. Եթե 2-րդ պարբերությունում նշված ստուգումներից հետո պարզվում է, որ Համայնքի կողմից ներկայացված պահանջները բավարարվել են, սահմանային հսկողության անցակետի անասնաբուժական պետական տեսուչը մաքսային փաստաթղթերի հետ տրամադրում է 5(1) հոդվածում նշված վկայագիրը: Սահմանային հսկողության անցակետի անասնաբուժության գծով եւ մաքսային իրավասու մարմինները թույլատրում են արտադրանքի մուտքը ազատ տնտեսական գոտու պահեստ, ազատ մաքսային պահեստ կամ մաքսային պահեստ: Այսպիսի արտադրանքը անասնաբուժական տեսանկյունից պիտանի է հայտարարվում՝ հետագայում ազատ շրջանառության մեջ դրվելու համար:

4. Եթե 2-րդ պարբերության մեջ նշված ստուգումներից հետո պարզվում է, որ արտադրանքը չի բավարարում Համայնքի պահանջները, ապա սահմանային հսկողության անցակետի անասնաբուժական պետական տեսուչը մաքսային պաշտոնական փաստաթղթերի հետ տրամադրում է 5(1) հոդվածում նշված վկայագիրը: Սահմանային հսկողության անցակետի մաքսային եւ անասնաբուժության գծով իրավասու մարմիններն այս դեպքերում կարող են թույլատրել արտադրանքի մուտքը ազատ տնտեսական գոտի, ազատ մաքսային պահեստ կամ մաքսային պահեստ, եթե, չհակասելով 16-րդ հոդվածի դրույթներին, կատարվել են հետեւյալ պահանջները.

- ա) արտադրանքը չպետք է ներկրվի այնպիսի երրորդ երկրից, որտեղից դրա ներկրումն արգելված է՝ 11(1)(ա) հոդվածի առաջին նախադասությամբ սահմանվածի համաձայն,
- բ) ազատ տնտեսական գոտիների պահեստները եւ ազատ մաքսային պահեստները կամ մաքսային պահեստները պետք է հաստատվեն արտադրանքի պահուստավորման գծով



իրավասու մարմնի կողմից. հաստատման համար դրանք պետք է բավարարեն հետևյալ պահանջները.

- ունենան փակ տարածք պահեստի ղեկավարության մշտական հսկողության տակ գտնվող ելքի եւ մուտքի կետերով: Եթե պահեստը գտնվում է ազատ տնտեսական գոտում, ապա ամբողջ գոտին պետք է փակվի եւ դրվի մշտական մաքսային վերահսկողության տակ,
- համապատասխան են տվյալ արտադրանքի պահուստավորմանը վերաբերող՝ Համայնքի օրենսդրության մեջ, կամ Համայնքի համապատասխան օրենսդրության բացակայության դեպքում, ազգային օրենսդրության մեջ շարադրված հաստատման պայմաններին,
- համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ պահեստ մուտք գործող կամ այնտեղից դուրս բերվող արտադրանքի ամենօրյա գրանցման համար՝ յուրաքանչյուր բեռի համար նշելով արտադրանքի բնույթն ու քանակը եւ ստացողի անունն ու հասցեն: Այսպիսի գրառումները պետք է պահվեն առնվազն երեք տարի,
- ունենան պահուստավորման եւ սառեցման համար նախատեսված տարածքներ, որոնք թույլ կտան առանձին պահուստավորելու այն արտադրանքը, որը չի համապատասխանում անասնաբուժական օրենսդրության պահանջներին,
- իրավասու մարմինը կարող է, այնուամենայնիվ, պահեստների առկայության դեպքում, թույլատրել այդ արտադրանքի առանձին պահուստավորումը միեւնույն շենքային տարածքում, եթե Համայնքի չափանիշներին չհամապատասխանող արտադրանքը պահուստավորվում է կողպվող մեկուսացված ներփակ տարածքներում,
- ունենան անասնաբուժական ստուգումներ իրականացնող անձնակազմի համար շենքային տարածք:

Եթե 2-րդ պարբերության մեջ նշված ստուգումներով բացահայտվել է, որ բեռի համար պատասխանատու անձը կեղծ հայտարարություն է արել ըստ 1-ին պարբերության՝ նա պարտավոր է, 17-րդ հոդվածի համաձայն, տնօրինել արտադրանքը:

5. Իրավասու մարմինները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ քայլերը՝

- ապահովելու պահեստների հաստատման համար անհրաժեշտ պայմանների պահպանումը,

—կանխելու Համայնքի անասնաբուժական պահանջներին չհամապատասխանող արտադրանքի՝ մյուս արտադրանքի հետ միեւնոյն սենյակում կամ փակ տարածքում պահուստավորելը:

—ապահովելու պահեստի մուտքերի ու ելքերի արդյունավետ ստուգումը, եւ, պահեստի աշխատանքային ժամերի ընթացքում, ապահովելու անասնաբուժական մարմնի վերահսկողությունը: Նրանք պետք է, մասնավորապես, ապահովեն, որ Համայնքի պահանջները չբավարարող արտադրանքն առանց իրավասու մարմնի համաձայնության դուրս չբերվի իրենց պահուստավորման սենյակներից կամ մասնաշենքերից:

—իրականացնելու բոլոր անհրաժեշտ ստուգումները՝ պահեստում պահվող արտադրանքի փոփոխությունը, փոխարինումը կանխելու կամ դրանց փաթեթավորմանը, շուկայահանմանը նախապատրաստելու կամ մշակման ձեւի մեջ ցանկացած փոփոխությունից խուսափելու համար:

6. Անդամ պետությունը կարող է, կենդանիների կամ հանրային առողջության նկատառումներից ելնելով, մերժել արտադրանքի ընդունումը մաքսային պահեստ, ազատ մաքսային պահեստ կամ ազատ տնտեսական գոտի, եթե դրանք չեն համապատասխանում Համայնքի օրենսդրությամբ սահմանված պայմաններին:

7. Բեռները չպետք է մուտք գործեն ազատ տնտեսական գոտի, ազատ մաքսային պահեստ կամ մաքսային պահեստ, եթե պաշտպանված չեն մաքսային կապարակնիքներով:

8. 4-րդ պարբերության մեջ նշված բեռները կարող են երրորդ երկիր կամ 13-րդ հոդվածում նշված պահեստ փոխադրվելու կամ ոչնչացվելու նպատակով դուրս բերվել ազատ տնտեսական գոտուց, ազատ մաքսային պահեստից եւ մաքսային պահեստից, պայմանով, որ.

—երրորդ երկիր փոխադրումը կատարվի 11(1)(գ) եւ 11(2)(ա), (գ), (դ) եւ (ե) հոդվածների պահանջներին համապատասխան,

—համաձայն 13-րդ հոդվածում նշվածի՝ փոխանցումը պահեստ իրականացվի T1 մաքսային հսկողության ձեւաթղթի հիման վրա, որը պարունակում է այդ հոդվածով նախատեսված կից վկայագրում նշված պահեստի անվանումն ու գտնվելու վայրը:

—ոչնչացման վայր փոխադրումը տեղի ունենա այդ արտադրանքի բնափոխումից հետո:

Տվյալ բեռները հետագայում ուղարկվում են այնպիսի պայմաններով, որոնք ապահովում են, որ փոխադրումն իրականացվի առանց բեռնաթափման, իրավասու մարմինների վերահսկողության ներքո, իրավասու մարմինների կողմից կնքված հերմետիկ փոխադրամիջոցներով կամ կոնտեյներներով:

Այսպիսի բեռները կարող է չտեղափոխվեն սույն հոդվածում նշված մեկ պահեստից մյուսը:

## **91**

### **▼B**

10. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում.

ա) 4-րդ պարբերության մեջ նշված ազատ տնտեսական գոտիների, ազատ մաքսային պահեստների եւ մաքսային պահեստների ցանկերը:

բ) 13-րդ հոդվածում նշված մատակարարների ցանկը:

Հանձնաժողովը կազմակերպում է (ա) կետի ցանկի հրապարակումը Եվրոպական խորհրդի պաշտոնական գրանցամատյանում եւ (բ) կետի մատակարարների ցանկը փոխանցում է մյուս անդամ պետություններին:

11. 1-10-րդ պարբերություններում սահմանված պայմանները չկատարելու դեպքում եւ այնքանով, որքանով այդ պայմանները կիրառելի են պահեստի նկատմամբ՝ իրավասու մարմինը կասեցնում կամ չեղյալ է համարում իր հաստատումը 4-րդ պարբերության (բ) կետում նշվածի համաձայն: Այն տեղեկացնում է Հանձնաժողովին կամ մյուս անդամ պետություններին իր հաստատումը չեղյալ համարելու մասին:

Դիտավորության կամ լուրջ անփութության հետեւանքով խախտումների հայտնաբերման դեպքերում, փոխադրման համար պատասխանատու անձի նկատմամբ՝ բեռը պահեստից դուրս բերվելուց հետո, կիրառվում են տվյալ անդամ պետության ազգային օրենքով սահմանված պատժամիջոցները:

12. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոնները, մասնավորապես այդպիսի գոտիներ կամ պահեստներ բեռների ժամանման եւ դրանցից դուրսբերման ժամանակ իրականացվող ստուգման ընթացակարգերը, բեռների տեղափոխումն այդպիսի գոտիների կամ պահեստների միջեւ, արտադրանքի պահուստավորման ձեւերը եւ իրացման թույլատրելի եղանակներն ընդունվում են 29 –րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

### Հոդված 13

1. Այն մատակարարները, որոնք ծովային միջսահմանային փոխադրամիջոցների անձնակազմին եւ ուղեւորներին անմիջականորեն մատակարարում են 12(4) հոդվածում նշված սպառման համար նախատեսված արտադրանք 12(1), (2), (4) (ա) հոդվածների պահանջներին եւ (4) (բ), (5), (6), (7) եւ (9) հոդվածների երկրորդ, երրորդ եւ չորրորդ պարբերություններին համապատասխանելուց բացի, պետք է.

- ա) նախօրոք լիազորված լինեն՝ իրավասու մարմնի կողմից որպես մատակարար գործելու համար,
- բ) ձեռք բերեն արտադրանքի պաշարներ, որոնք չեն կարող մշակման ենթարկվել, եթե հումքը չի համապատասխանում Համայնքի կողմից ներկայացված պահանջներին,
- գ) ունենան փակ մասնաշենքեր, որոնց մուտքի եւ ելքի կետերը լինեն պատասխանատու անձի մշտական հսկողության տակ: Եթե պահեստը գտնվում է ազատ տնտեսական գոտում, ապա դրա նկատմամբ կիրառվում են 12(4)(բ) հոդվածի առաջին պարբերության երկրորդ նախադասության պահանջները,
- դ) երաշխավորեն, որ 12(4) հոդվածում նշված արտադրանքը բաց չեն թողնի սպառման համար I հավելվածում թվարկված երկրներից որեւէ մեկի տարածք:
- ե) իրավասու մարմնին հնարավորինս շուտ ծանուցեն արտադրանքը պահեստ հասնելու մասին՝ (գ) կետում նշվածի համաձայն:

2. Առաջին պարբերության մեջ նշված մատակարարները պետք է՝

- ա) իրականացնեն բեռնառաքումներն անմիջականորեն ծովային փոխադրամիջոցի տախտակամած կամ նպատակակետ հանդիսացող նավահանգստի հատուկ հաստատված պահեստ՝ պայմանով, որ միջոցներ ձեռնարկվեն՝ երաշխավորելու համար, որ տվյալ արտադրանքը ոչ մի հանգամանքում դուրս չի բերվի նավահանգստի գոտուց մեկ այլ նպատակակետ հանդիսացող վայր: Արտադրանքի բեռնափոխադրումը դրանց ծագման վայրի պահեստից նպատակակետ հանդիսացող վայրի նավահանգիստ պետք է իրականացվի մաքսային վերահսկողության ներքո՝ թիվ 2913/92 (ԵՏՀ) կանոնակարգում շարադրված T1 ընթացակարգի համաձայն եւ դրան պետք է կից ներկայացվի 6-րդ պարբերության ընթացակարգին համապատասխան ձեւակերպված անասնաբուժական վկայագիր,

- բ) արտադրանքն ուղարկող անդամ պետության նավահանգստի գոտու իրավասու մարմինն է և նպատակակետ հանդիսացող վայրի անդամ պետության նավահանգստի իրավասու մարմիններին նախօրոք ծանուցեն արտադրանքի առաքման մասին՝ ծանուցման մեջ ներառելով նաև նպատակակետ հանդիսացող վայրի մասին մանրամասն տեղեկություններ,
- գ) պաշտոնական ապացույց տրամադրեն այն մասին, որ ապրանքները հասել են իրենց վերջնական նպատակակետ հանդիսացող վայրը,
- դ) առնվազն երեք տարի պահեն մուտքերի եւ առաքումների գրանցամատյանը: Գրանցամատյանը պետք է օգնի պահեստում մնացած բեռների չափաբաժինների ստուգումներ իրականացնելիս:

3. Մատակարարները պետք է երաշխավորեն, որ նավերին այնպիսի արտադրանք չեն մատակարարի, որը չի բավարարում Համայնքի պահանջները, բացառությամբ այն դեպքի, երբ դրանք պետք է մատակարարել | հավելվածում թվարկված տարածքների ավամերձ շրջաններից դուրս գտնվող նավերի անձնակազմերին եւ ուղեւորներին, ինչպես սահմանված է ազգային կանոնակարգերով:

4. Արտադրանքը մատակարարող անդամ պետության նավահանգստի գոտու իրավասու մարմինը արտադրանքի առաքման պահից ոչ ուշ դրա մասին ծանուցում է նպատակակետ հանդիսացող անդամ պետության նավահանգստի գոտու իրավասու մարմինն է և ANIMO ցանցի միջոցով տեղեկացնում արտադրանքի նշանակման վայրի մասին:

5. Սույն հոդվածի պայմանները չկատարելու դեպքում իրավասու մարմինը պետք է չեղյալ համարի 1(ա) կետում նշված թույլտվությունը: Այն Հանձնաժողովին է մյուս անդամ պետություններին տեղեկացնում է թույլտվությունը չեղյալ համարելու մասին:

6. Սույն հոդվածի կիրառման մանրամասն կանոնները, մասնավորապես մեկնելու պահին, ծովով փոխադրվելիս, ուղղակիորեն ծովային փոխադրամիջոցի տախտակամածին բեռնման ենթակա արտադրանքն ուղարկելու ժամանակ ստուգումների իրականացման ընթացակարգերը՝ ներառյալ այն երաշխիքները, որ այդ արտադրանքը հասել է իր օրինական նշանակման վայր՝ ընդունվում են 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

#### **Հոդված 14**

1. Այն արտադրանքը, որի համար սահմանված մաքսային ռեժիմը կամ օգտագործման եղանակը թիվ 2913/92 (ԵՏՀ) կանոնակարգի իմաստով այլ է, քան նախատեսված է սույն Հրահանգի 7-րդ եւ 12 (3) հոդվածներով, անցնում է նույնականացման եւ փաստացի ստուգում՝ որոշելու դրանց համապատասխանությունը ներմուծման պայմաններին, եթե դրանք չեն ոչնչացվել կամ վերադարձվել:

2. Անհրաժեշտության դեպքում ընդունվում են սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոններ՝ 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

#### **Հոդված 15**

1. Անդամ պետությունը թույլատրում է համայնքային ծագում ունեցող եւ երրորդ երկրի կողմից մերժված արտադրանքի խմբաքանակների վերաներմուծումը, եթե

ա) արտադրանքին կցվում են.

i) վկայագրի բնօրինակը կամ արտադրանքին կից վկայագիրը թողարկած իրավասու մարմնի կողմից դրա վավերացված պատճեն՝ արտադրանքի մերժման պատճառների մանրամասն նկարագրությամբ, ինչպես նաեւ երաշխիք, որ դրանց պահուստավորումն ու փոխադրումը կարգավորող պայմանները պահպանվել են, եւ որ տվյալ արտադրանքը չի անցել բեռների որեւէ մշակում:

ii) կնքված կոնտեյներների դեպքում, փոխադրողի կողմից վկայագիր, որտեղ նշված է, որ բեռների պարունակությունը չի մշակվել եւ չի բեռնաթափվել:

բ) վերոնշյալ արտադրանքն անցնում է փաստաթղթային եւ նույնականացման ստուգում, իսկ 20-րդ հոդվածում նախատեսված դեպքերում՝ փաստացի ստուգում:

գ) բեռը 8(4) հոդվածով նախատեսված պայմաններով անմիջականորեն վերադարձվում է վկայագիր տրամադրող անդամ պետության ծագման ձեռնարկություն, եւ եթե արտադրանքը նախատեսված է տարանցվելու մեկ այլ անդամ պետության միջով, դա, բոլոր այն անդամ պետությունների անունից, որոնցով անցնելու է բեռը, նախօրոք թույլատրվել է այն անդամ պետության սահմանային հսկողության անցակետի անասնաբուժական պետական տեսուչի կողմից, որտեղ բեռները առաջինն են ժամանել | հավելվածում թվարկված Համայնքի տարածքներից որեւէ մեկը:

2. Անդամ պետությունը չի կարող արգելել երրորդ երկրի կողմից մերժված՝ համայնքային ծագում ունեցող արտադրանքի խմբաքանակի կրկնակի ներկրումը, եթե վկայագրի բնօրինակը թողարկած իրավասու մարմինը համաձայնվել է հետ վերցնել բեռը եւ.

3. 1-ին եւ 2-րդ պարբերություններով նախատեսված հանգամանքներում արտադրանքն ուղարկվում է այնպիսի պայմաններով, որոնցով երաշխավորվում են, 8(4) հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն, դրանց փոխադրումը ծագման ձեռնարկություն հերմետիկ փոխադրամիջոցներով, կնքված իրավասու մարմնի կողմից այնպես, որ կապարակնիքները բացվեն միայն կոնտեյնրի բացվելու հետ մեկտեղ:

4. Բեռնափոխադրումը լիազորող անասնաբուժական պետական տեսուչը տեղեկացնում է նպատակակետ հանդիսացող վայրի իրավասու մարմնին ANIMO ցանցի միջոցով:

#### **▼B**

6. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոններն ընդունվում են 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

### **Հոդված 16**

1. Սույն գլուխը չի կիրառվում այն արտադրանքի նկատմամբ, որը՝

ա) կազմում են ճանապարհորդի անձնական ուղեբեռի մաս եւ նախատեսված են իրենց անձնական սպառման համար, այնքանով, որքանով դրանց քանակությունը չի գերազանցում 3-րդ պարբերությունով որոշվող քանակությունը եւ պայմանով, որ դրանք բերված լինեն մի որեւէ անդամ պետությունից կամ այն երրորդ երկրից կամ երրորդ երկրի տարածքի մի մասից, որը ներառված է Համայնքի կանոնների համաձայն ընդունված ցանկում, եւ որից ներմուծումներն արգելված չեն:

բ) որպես փոքր բեռներ ուղարկվել են անհատների, պայմանով, որ դրանք չեն ներմուծվել առետրի միջոցով, այնքանով, որքանով ուղարկված բեռների քանակությունը չի գերազանցում 3-րդ պարբերության համաձայն սահմանված քանակությունը եւ պայմանով, որ դրանք բերված լինեն մի որեւէ անդամ պետությունից կամ այն երրորդ երկրից կամ երրորդ երկրի տարածքի մի մասից, որը ներառված է Համայնքի կանոնների համաձայն ընդունված ցանկում, եւ որից ներմուծումներն արգելված չեն:

գ) միջազգային փոխադրումներ իրականացնող փոխադրամիջոցների վրա են բեռնված եւ նախատեսված են անձնակազմի ու ուղեւորների սպառման համար, պայմանով, որ դրանք ներկրված չլինեն I հավելվածում նշված տարածքներից որեւէ մեկը:

Եթե, այդպիսի արտադրանքը կամ դրանց խոհանոցային թափոնները բեռնաթափվում են, ապա դրանք պետք է ոչնչացվեն հենց այդ բեռնաթափման վայրում: Այնուամենայնիվ անհրաժեշտություն չկա ոչնչացնելու արտադրանքը, եթե դրանք միեւնույն նավահանգստում եւ մաքսային վերահսկողության ներքո մեկ միջազգային փոխադրում իրականացնող փոխադրամիջոցից անմիջականորեն տեղափոխվել են մյուսը:

դ) դրանք, այն դեպքում, երբ արտադրանքի քանակությունը չի գերազանցել 3-րդ պարբերության համաձայն սահմանվող քանակությունը, հերմետիկ փակվող տարայով անցել են FO 3,00 ջերմամշակում եւ:

ի) կազմում են ճանապարհորդների անձնական ուղեբեռների մաս եւ նախատեսված են նրանց անձնական սպառման համար,

ii) ուղարկվել են անհատների որպես փոքր բեռներ՝պայմանով, որ դրանք չներմուծվեն առետրի միջոցով,

ե) ուղարկվել են որպես առետրային նմուշներ եւ նախատեսված են ցուցահանդեսների համար՝ պայմանով, որ դրանք նախատեսված չլինեն շուկայահանման համար, եւ դրանց շուկայահանումը նախօրոք թույլատրված չլինի իրավասու մարմնի կողմից,

զ) նախատեսված են հատուկ ուսումնասիրությունների եւ վերլուծությունների համար՝այնքանով, որքանով պաշտոնական տեսչական ստուգումից հնարավոր է որոշել, որ այդ արտադրանքը չի մատակարարվել մարդկանց սպառման համար, եւ որ այն ժամանակ, երբ ցուցահանդեսն ավարտվի կամ վերլուծություններն իրականացվեն, դրանք, բացի այն խմբաքանակներից, որ օգտագործվել են վերլուծությունների համար, իրավասու մարմնի կողմից սահմանվող որոշակի պայմանների համաձայն, վերացվելու կամ վերաուղարկվելու են:

«ե» կետում նշված դեպքում եւ այս դեպքում նպատակակետ հանդիսացող անդամ պետությունը երաշխավորում է, որ տվյալ արտադրանքն իր տարածքում ներմուծվելու նպատակներից բացի այլ նպատակների համար չի կարող օգտագործվել:

2.1-ին պարբերությամբ ազդեցություն չի գործվում այն կանոնների վրա, որոնք տարածվում են թարմ մսի եւ մսային արտադրանքի վրա՝ համաձայն Խորհրդի «Երրորդ երկրներից



խոշոր եղջերավոր անասուններ, ոչխարներ եւ այծեր, ինչպես նաեւ խոզեր, թարմ միս կամ մսամթերք ներկրման ժամանակ առողջության եւ անասնաբուժական տեսչական ստուգումների խնդիրների մասին» 1972 թվականի դեկտեմբերի 12-ի 72/462/ԵՏՀ հրահանգի 1(2) հոդվածի<sup>21</sup>:

3. Հանձնաժողովը որոշում է տարբեր արտադրատեսակների կիրառման կանոնները եւ, մասնավորապես, 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան, 1-ին պարբերության մեջ նշված շեղումներով կարգավորվող տարբեր արտադրատեսակների քաշային սահմանափակումները:

#### **▼M1**

4. Միջազգային փոխադրում իրականացնող փոխադրամիջոցների անձնակազմի եւ ուղեւորների մատակարարման համար նախատեսված կենդանական ծագում ունեցող արտադրանքի եւ հեռահաղորդակցման միջոցներով (օրինակ՝ էլեկտրոնային փոստով, հեռախոսով կամ համացանցի միջոցով) պատվիրված եւ սպառողին տրամադրված՝ կենդանական ծագում ունեցող արտադրանքի ներմուծման մանրամասն կանոնները սահմանվում են թիվ 882/2004 (ԵՀ) կանոնակարգի 25-րդ հոդվածի համաձայն:

#### **▼B**

### **Հոդված 17**

1. Բեռները, որոնք ներմուծվել են Համայնքի տարածքներից որեւէ մեկը առանց 3-րդ եւ 4-րդ հոդվածների պահանջների համաձայն անասնաբուժական ստուգման ներկայացվելու, առգրավվում են եւ իրավասու մարմինը որոշում է կայացնում 2(բ) պարբերության դրույթների համաձայն, դրանց ոչնչացման կամ 2(ա) պարբերության դրույթների համաձայն, դրանց վերաուղարկման վերաբերյալ:

2. Եթե սույն Հրահանգում նշված ստուգումներով իրավասու մարմնի համար բացահայտվում է, որ արտադրանքը չի բավարարում ներմուծման պայմանները կամ, եթե դրանք բացահայտում են խախտման դեպք՝ իրավասու մարմինը բեռի համար պատասխանատու անձի կամ նրա ներկայացուցչի հետ խորհրդակցելուց հետո որոշում է.

---

<sup>21</sup>ՊՏ L 302, 31.12.1972թ., էջ 28: 96/91/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 13, 16.01.1997թ., էջ 27):

ա) կամ, օգտագործելով միեւնույն փոխադրամիջոցը, առավելագույնը 60 օրվա ընթացքում հետ ուղարկել արտադրանքը I հավելվածում թվարկված տարածքներից դուրս միեւնույն սահմանային հսկողության անցակետից մինչեւ բեռի համար պատասխանատու անձի հետ համաձայնեցված նշանակման վայրը, եթե դա չի արգելվում անասնաբուժական ստուգման արդյունքներով եւ առողջության նկատմամբ պահանջներով:

Այս դեպքում, սահմանային հսկողության անցակետի անասնաբուժական պետական տեսուչը պետք է՝

– իրականացնի 92/438/ԵՏՀ որոշման 1-ին հոդվածի առաջին պարբերությունը սահմանված տեղեկատվության ընթացակարգը.

—7-րդ պարբերության մեջ նշված ընթացակարգին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից սահմանվող պայմանավորվածությունների համաձայն անվավեր ճանաչի մերժված արտադրանքին կից ներկայացված անասնաբուժական վկայագրերը կամ փաստաթղթերը, այնպես, որ հնարավոր չլինի մերժված արտադրանքի վերաներկրումը մեկ այլ սահմանային հսկողության անցակետով:

բ) կամ, եթե արտադրանքի վերաուղարկումն անհնար է, ապա (ա) կետում նշված 60-օրյա ժամկետն անցել է կամ բեռի համար պատասխանատու անձը տալիս է իր անմիջական համաձայնությունը, ոչնչացնել այդ արտադրանքը սահմանային հսկողության անցակետին ամենամոտ գտնվող հատուկ այդ նպատակի համար նախատեսված տարածքներում՝ համաձայն «Կենդանիների շուկայահանման եւ կենդանական եւ ձկնային ծագում ունեցող կերում ախտածիններից խուսափելու համար կենդանական թափոնների գործածության եւ մշակման համար անասնաբուժական կանոններ սահմանող» Խորհրդի 1990 թվականի նոյեմբերի 27-ի 90/667/ԵՏՀ հրահանգի<sup>22</sup>:

Նախքան սույն կետում նշված արտադրանքի վերաուղարկումը կամ դրանց վերաուղարկումը մերժելու պատճառների հաստատումը՝ իրավասու մարմինները բեռի համար պատասխանատու անձի հաշվին իրավասու մարմնի վերահսկողության ներքո պահուստավորում են տվյալ արտադրանքը:

3. 23-րդ եւ 24-րդ հոդվածի դրույթները կիրառվում են այն դեպքում, երբ 1-ին եւ 2-րդ պարբերություններում նշված ստուգումների արդյունքում բացահայտվում է, որ Համայնքի օրենսդրության մեջ տեղի է ունեցել կամ տեղի են ունեցել լուրջ եւ կրկնվող խախտումներ:

<sup>22</sup>ՊՏ L 363, 27.12.1990թ., էջ 51: Վերջին անգամ 1994 թվականի «Անդամակցության ակտ»-ով փոփոխված հրահանգ:

4. 2-րդ պարբերությունը չի կիրառվում այն դեպքում, եթե իրավասու մարմինը արտադրանքը օգտագործելու թույլտվություն է տվել 90/667/ԵՏՀ հրահանգի համաձայն՝ պայմանով, որ չլինեն կենդանիների եւ հանրային առողջությունը վտանգելու ռիսկեր:

5. Բեռի համար պատասխանատու անձը կամ նրա ներկայացուցիչը պատասխանատվություն է կրում բեռի վերաուղարկման կամ ոչնչացման կամ արտադրանքն այլ ձեռով օգտագործելու ընթացքում առաջացած ծախսերի համար:

Ավելին, եթե խախտումը տեղի է ունեցել լուրջ անփութության կամ դիտավորության հետեւանքով, ապա անդամ պետությունը պետք է բեռի համար պատասխանատու անձի նկատմամբ կիրառի իր ազգային օրենսդրությամբ նախատեսված պատժամիջոցները:

6. Կկիրառվեն 92/438/ԵՏՀ որոշման դրույթները:

7.1-ին եւ 3-րդ պարբերությունների կիրառման համար մանրամասն կանոնները, մասնավորապես՝ արտադրանքի մերժման, ազդարկման կամ ոչնչացման մասին որոշում կայացնելիս գնահատման չափորոշիչների ստանդարտացման մասին կանոնները, ընդունվում են 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն:

## **Հոդված 18**

29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն՝ Հանձնաժողովը երկրորդ ենթապարբերության մեջ նշված ծրագրերի հիման վրա, ընդունում է I հավելվածում թվարկված տարածքների որոշ շրջաններ ներմուծվող արտադրանքի նկատմամբ կիրառելի կանոններ, որոնցում հաշվի կառնվեն այդ տարածքների առանձնահատուկ բնական սահմանափակումները, այդ թվում՝ Համայնքի տարածքի կենտրոնական մասերից դրանց հեռավորությունը:

Այդ նպատակով Ֆրանսիայի եւ Հունաստանի Հանրապետությունները Հանձնաժողով են ներկայացնում այնպիսի ծրագիր, որը Ֆրանսիայի արտասահմանյան գերատեսչությունների ու որոշ կղզիների եւ կղզիների խմբերի մասնավոր դեպքի համար սահմանում է երրորդ երկրների ծագում ունեցող արտադրանքի՝ այդ տարածաշրջաններ ներմուծումների ստուգումների բնույթը՝ հաշվի առնելով դրանց առանձնահատուկ բնական աշխարհագրական սահմանափակումները:

Այդ ծրագրերը սահմանում են որեւէ պարագայում տվյալ տարածքներ ներկրված արտադրանքի վերաուղարկումը Համայնքի այլ տարածքներ կանխելու իրականացվող ստուգումները, եթե իհարկե, այդ տարածքները չեն համապատասխանում Համայնքի անասնաբուժական օրենսդրության պայմաններին:

## Հոդված 19

1. Հանձնաժողովը, 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համապատասխան, կազմում է բուսական ծագում ունեցող արտադրանքի ցանկը, որոնք, մասնավորապես հիմք ընդունելով իրենց հետագա նշանակման վայրը, կարող են հանգեցնել վարակիչ կամ հպավարակիչ կենդանական հիվանդությունների եւ հենց դա հիմք ընդունելով, պետք է ենթարկվեն սույն Հրահանգով սահմանված անասնաբուժական ստուգումներին եւ, մասնավորապես 4-րդ հոդվածով նախատեսված ստուգումներին՝ պարզելու դրանց ծագումը եւ ծրագրված նշանակման վայրը:

Նույն ընթացակարգի համաձայն ընդունվում է հետեւյալը.

— կենդանիների առողջության պայմանների պահպանումը , որին երրորդ երկրները պետք է ենթարկվեն եւ առաջարկվելիք երաշխիքները, մասնավորապես ցանկացած մշակման բնույթը, որը կպահանջվի՝ ելնելով իրենց կենդանիների առողջական վիճակից,

— այն երրորդ երկրների ցանկը, որոնց, տրամադրված երաշխիքների հիման վրա, կարող է թույլատրվել Համայնք արտահանել առաջին պարբերության մեջ նշված բուսական արտադրանքը,

— ցանկացած հատուկ ստուգման ընթացակարգ, մասնավորապես՝ նմուշառման հետ կապված, որը կարող է կիրառվել այս արտադրանքի՝ հատկապես արտադրանքի մեծ խմբաքանակների ներմուծման դեպքում:

2. Երրորդ երկրի դրոշի ներքո նավարկող ձկնորսային նավից անմիջապես բեռնաթափված թարմ ձկնամթերքը, նախքան դրա ներմուծումը I հավելվածում թվարկված որեւէ մի տարածք, անցնում է անդամ երկրի դրոշի ներքո նավարկող ձկնորսային նավերից անմիջապես բեռնաթափված ձկների հետ կապված անասնաբուժական ստուգումները՝ Խորհրդի 1994 թվականի մայիսի 6-ի թիվ 1093/94 (ԵՏՀ ) կանոնակարգի համաձայն, որը սահմանում է այն պայմանները, որոնցով երրորդ երկրների ձկնորսական նավերն անմիջապես իջեւանում են Համայնքի նավահանգիստներում եւ շուկայահանում իրենց որսը:

Այնուամենայնիվ, 3(2) հոդվածից շեղում կատարելով, անդամ պետությանը կարող է, 29-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգի ներքո, թույլատրել իրականացնել սույն Հրահանգով սահմանված ստուգումները սառեցված կամ խորը սառեցված թյուննուսի դեպքում, որն առանց գլխատվելու կամ փորոտիքը մաքրելու, անմիջապես բեռնաթափվել է Համայնքի կողմից ընդունված համապատասխան դրույթների համաձայն գրանցված համատեղ ձեռնարկություններին պատկանող ձկնորսական նավից.

—այսպիսի ստուգումներն իրականացվում են մոտակա սահմանային հսկողության անցակետի իրավասու մարմնի կողմից, այդ արտադրանքի մշակման նպատակակետ հանդիսացող արդյունաբերության մեջ,

—մշակող արդյունաբերությունը տեղակայված է սահմանային հսկողության անցակետից ոչ ավելի, քան 75 կմ հեռավորության վրա:

—արտադրանքը բեռնաթափման կետից մինչև նպատակակետ հանդիսացող ձեռնարկությանը փոխանցվում են մաքսային վերահսկողության ներքո՝ 8(4) հոդվածի առաջին պարբերությի համաձայն:

3. 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն՝ շեղումներ կարող են արտոնվել 6 (1) (բ) հոդվածից, իսկ, ստուգումների իրականացման եւ վկայագրերի տրամադրման համար պատասխանատու անձնակազմի դեպքում, 4 (1) եւ 5 (1) հոդվածներից այն սահմանային հսկողության անցակետերի համար, որտեղ ձկնամթերքը ներկայացվում է ձկնամթերքների արտադրության եւ շուկայահանման պայմանները սահմանող՝ Խորհրդի 1991 թվականի հուլիսի 22-ի 91/493 ԵՏՀ հրահանգի համաձայն<sup>23</sup>:

## Հոդված 20

1. Չսահմանափակելով սույն գլխի մյուս դրույթների գործողությունը՝ անասնաբուժական պետական տեսուչը կամ իրավասու մարմինը, եթե կա կասկած, որ անասնաբուժության վերաբերյալ օրենսդրությունը չի պահպանվել կամ կան կասկածներ՝ կապված.

«ա» արտադրանքի նույնականացման կամ փաստացի նշանակման վայրի,

«բ» արտադրանքի այդ տեսակի համար օրենսդրությամբ սահմանված երաշխիքներին արտադրանքի համապատասխանության,

<sup>23</sup>ՊՏ L 268, 24.09.1991թ., էջ 15: 96/23/ԵՀ հրահանգով (ՊՏ L 125, 23.5.1996թ., էջ 10) վերջին անգամ փոփոխված հրահանգ:

«գ» Համայնքի օրենսդրությամբ սահմանված՝ կենդանիների կամ հանրային առողջության երաշխիքներին համապատասխանության հետ:

1. իրականացնում է ցանկացած անասնաբուժական ստուգում, որ անասնաբույժը կամ մարմինը անհրաժեշտ է համարում՝ այդ կասկածը հաստատելու կամ բացառելու համար: Ստուգված արտադրանքը պետք է գտնվի իրավասու մարմնի վերահսկողության ներքո՝ նախքան ստուգումների արդյունքներն ստանալը:

Կասկածների հաստատման դեպքում, 17(3) հոդվածի համաձայն, նույն ծագումն ունեցող արտադրանքի նկատմամբ առավել մանրակրկիտ ստուգումներ պետք է իրականացվեն:

2. Սույն հոդվածի կիրառման մանրամասն կանոններն ընդունվում են 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

**▼B**

## **ԳԼՈՒԽ II**

### **Պաշտպանիչ դրույթները**

#### **Հոդված 22**

1. Եթե երրորդ երկրի տարածքում «Համայնքի ներսում կենդանիների հիվանդությունների վերաբերյալ ծանուցման մասին» 1982 թվականի դեկտեմբերի 21-ի 82/894/ԵՏՀ հրահանգում նշված հիվանդությունը<sup>24</sup>, զրոնիզ կամ մեկ այլ հիվանդություն է ի հայտ գալիս կամ կենդանիների կամ հանրային առողջության համար վտանգ ներկայացնող երեւույթ է տեղի ունենում կամ տարածվում այդ երկրի տարածքում, կամ եթե կենդանիների առողջության հետ կապված որեւէ այլ հիմնավորմամբ, մասնավորապես, անասնաբույժ փորձագետների կողմից ստացված արդյունքների հիմքով պահանջվում է, ապա Հանձնաժողովը, իր սեփական նախաձեռնությամբ կամ անդամ պետության պահանջով, կարող է առանց հապաղման եւ իրավիճակի հրատապությունից ելնելով, ընդունել հետեւյալ միջոցներից որեւէ մեկը՝

---

<sup>24</sup>ՊՏ L 378, 31.12.1982թ., էջ 58: Վերջին անգամ 1994 թվականի «Անդամակցության ակտ»-ով փոփոխված հրահանգ:

– կասեցնել տվյալ երրորդ երկրից կամ դրա մի մասից եւ, հարկ եղած դեպքում՝ տարանցման երրորդ երկրից կատարվող ներմուծումները,

– սահմանել տվյալ երրորդ երկրից կամ դրա մի մասից բերվող կենդանիների համար հատուկ պայմաններ,

– փաստացի ուսումնասիրությունների հիման վրա կազմել պահանջներ համապատասխան ստուգումների համար, որոնք կարող են ներառել հանրային կամ կենդանիների առողջության հետ կապված ռիսկերի հատուկ որոնումը եւ, կախված այդ ստուգումների արդյունքներից ,ավելացնել փաստացի ստուգումների հաճախականությունը:

2. Եթե սույն Հրահանգով սահմանված ստուգումների արդյունքում պարզ է դառնում, որ կենդանիների որեւէ խմբաքանակ կարող է վտանգ ներկայացնել կենդանիների կամ հանրային առողջության համար, ապա անասնաբուժության գծով իրավասու մարմինը պետք է անհապաղ ձեռնարկի հետեւյալ միջոցները՝

– առգրավի եւ ոչնչացի այդ խմբաքանակը,

– անմիջապես տեղեկացնի սահմանային հսկողության այլ անցակետերի եւ Հանձնաժողովին իր կողմից կատարված ուսումնասիրությունների եւ կենդանիների ծագման մասին՝ 92 (438) հոդվածի համաձայն:

3. 1-ին պարբերության մեջ նախատեսված դեպքում, Հանձնաժողովը կարող է ընդունել ժամանակավոր պաշտպանիչ միջոցներ՝ 11-րդ, 12-րդ եւ 13-րդ հոդվածներով կարգավորվող կենդանիների առումով:

4. Հանձնաժողովի ներկայացուցիչները կարող են անհապաղ այցելել տվյալ երրորդ երկիր:

5. Եթե անդամ պետությունը պաշտոնապես տեղեկացրել է Հանձնաժողովին պաշտպանիչ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին, եւ Հանձնաժողովը չի կիրառել 1-ին եւ 3-րդ պարբերությունները կամ հղել գործը Անասնաբուժության գծով մշտական կոմիտեին 6-րդ պարբերության համաձայն, ապա այդ անդամ պետությունը կարող է տվյալ կենդանիների առումով ձեռնարկել միջանկյալ պաշտպանիչ միջոցներ:

Եթե անդամ պետությունը, սույն պարբերության համաձայն, ձեռնարկում է միջանկյալ պաշտպանիչ միջոցներ՝ երրորդ երկրի կամ երրորդ երկրում տեղակայված ձեռնարկության նկատմամբ, ապա նա, 12 (5) հոդվածի համաձայն, դրա մասին տեղեկացնում է մյուս անդամ պետություններին եւ Հանձնաժողովին:

Գործը 10 աշխատանքային օրերի ընթացքում ուղարկվում է Անասնաբուժության գծով մշտական կոմիտե 28-րդ հոդվածի պայմանների համաձայն՝ նպատակ ունենալով երկարաձգելու, փոփոխելու կամ չեղյալ համարելու 1-ին եւ 3-րդ պարբերություններով սահմանված միջոցները: 28-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգը կարող է կիրառվել անհրաժեշտ որոշումներ ընդունելու համար՝ ներառյալ այն որոշումները, որոնք կապված են արտադրանքի ներհամայնքային տեղաշարժման եւ տարանցման հետ:

6. 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 5-րդ պարբերությունների համաձայն՝ երկարաձգելու, փոփոխելու կամ չեղյալ հայտարարելու մասին որոշումներն ընդունվում են 28-րդ հոդվածում սահմանված ընթացակարգին համապատասխան:

7. Անհրաժեշտության դեպքում, ընդունվում են սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոններ՝ 29-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

### **ԳԼՈՒԽ III**

#### **ՏԵՄՉԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ**

##### **▼B**

#### **Հոդված 24**

1. Երբ, սույն Հրահանգով նախատեսված ստուգումները հիմք են տալիս ենթադրելու, որ Համայնքի անասնաբուժական օրենսդրությունը լրջորեն կամ պարբերաբար խախտվել է, իրավասու մարմինը ձեռնարկում է հետեւյալ միջոցները՝ խախտումներով ներմուծված արտադրանքի կամ այդպիսի արտադրանքի բաղկացուցիչ մաս կազմող մթերքների հետ կապված.

— այն տեղեկացնում է Հանձնաժողովին օգտագործված արտադրանքի բնույթի եւ տվյալ բեռի մասին. Հանձնաժողովը դրա մասին տեղեկացնում է սահմանային հսկողության բոլոր անցակետերին:

— Անդամ պետություններն ավելի խիստ ստուգումներ են իրականացնում միեւնույն ծագումն ունեցող արտադրանքի բոլոր խմբաքանակների նկատմամբ: Մասնավորապես, միեւնույն ծագումն ունեցող հաջորդ 10 բեռը պետք է բռնագրավվի եւ տեսչական ստուգումների ծախսերի համար գրավ պետք է դրվի՝ իրականացնելու համար սահմանային հսկողության



անցակետում փաստացի ստուգումը՝ ներառյալ նմուշառումները եւ III հավելվածով նախատեսված լաբորատոր փորձարկումները,

— երբ այդ լրացուցիչ ստուգումներով հաստատվում է, որ Համայնքի օրենսդրության պահանջները չեն կատարվել, խախտման պատճառ հանդիսացող բեռը կամ դրա մի մասը պետք է տնօրինվի՝ ►M1 ►C1 համաձայն 17-րդ հոդվածի,։ ◀ ◀ ,

— Հանձնաժողովին տեղեկատվություն են տալիս առավել խիստ ստուգումների արդյունքների մասին եւ այդ տեղեկատվության հիման վրա այն կատարում է բոլոր անհրաժեշտ հետազոտությունները՝ հայտնաբերված խախտումների պատճառներն ու դրանց ծագումները պարզելու համար:

2. Եթե ստուգումների արդյունքում բացահայտվում է, որ կենդանական ծագում ունեցող արտադրանքում մնացորդների առավելագույն թույլատրելի մակարդակները գերազանցվել են, օգտագործվում են 1-ին պարբերության երկրորդ պարբերություն նշված ստուգումները:

3. Եթե, այն դեպքերում, երբ ներառված են այն երրորդ երկրները, որոնք համարժեքության համաձայնագրեր են կնքել Համայնքի կամ այն երրորդ երկրների հետ, որոնց բեռները ստուգվում են պակաս հաճախականությամբ, Հանձնաժողովը, տվյալ երրորդ երկրի իրավասու մարմիններին հարցումներ անելուց հետո, եզրակացնում է, որ այն չի կատարել 96/23/ԵՀ հրահանգի 29 (1) հոդվածով սահմանված ծրագրում նշված պարտականությունները եւ երաշխիքները, այն դադարում է թույլատրել այդ երկրին սույն Հրահանգի 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն, օգտվել արտադրանքի նկատմամբ պակաս հաճախականությամբ ստուգումների անցկացման արտոնությունից, քանի դեռ տվյալ երրորդ երկիրը չի վերացրել իր բացթողումները: Նույն ընթացակարգը կիրառվում է կասեցումը չեղյալ հայտարարելու դեպքում:

Անհրաժեշտության դեպքում տվյալ համաձայնագրերով նախատեսված արտոնությունները վերահաստատելու համար Համայնքի պատգամավորական խումբը՝ ներառյալ անդամ պետությունների փորձագետները, տվյալ երկրի հաշվին այցելում են այդ երկիր՝ այդ միջոցների ձեռնարկումն ստուգելու համար:

## Հոդված 25

1. Եթե կենդանիների շուկայահանման կետում կատարված ստուգումների հիման վրա անդամ պետության իրավասու մարմինը կարծում է, որ սույն Հրահանգի պահանջները չեն

պահպանվել 12-րդ հոդվածում նշված մեկ այլ անդամ պետության սահմանային հսկողության կետում, մաքսային պահեստում կամ ազատ մաքսային պահեստում, ապա այդ մարմինն առանց հապաղման դրա մասին տեղեկացնում է տվյալ անդամ պետության իրավասու ազգային մարմին:

Վերջինս ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ եւ տեղեկացնում է առաջին անդամ պետության իրավասու մարմինն կատարված ստուգումների բնույթի, ընդունված որոշումների եւ նման որոշումներ ընդունելու պատճառների մասին:

Եթե առաջին անդամ պետության իրավասու մարմինը կարծում է, որ միջոցներն անբավարար են, ապա այն՝ տվյալ անդամ պետության իրավասու մարմնի հետ համատեղ, ուսումնասիրում է այն եղանակները եւ միջոցները, որոնցով հնարավոր է իրավիճակն ուղղել, դրա համար, անհրաժեշտության դեպքում, այցելություն կատարելով տվյալ անդամ պետություն:

Եթե առաջին ենթապարբերությունում նշված ստուգումների արդյունքում պարզվում են սույն Հրահանգի հետ կրկնվող անհամապատասխանություններ, ապա նպատակակետ հանդիսացող անդամ պետության իրավասու մարմինը պետք է տեղեկացնի դրա մասին Հանձնաժողովին եւ այլ անդամ պետությունների իրավասու մարմիններին:

Հանձնաժողովը կարող է նպատակակետ հանդիսացող անդամ պետության իրավասու մարմնի պահանջով կամ իր սեփական նախաձեռնությամբ եւ, հաշվի առնելով ներկայացված խախտումների բնույթը.

—տվյալ անդամ պետություն ուղարկել տեսչական ստուգում իրականացնող անձանց խումբ՝ իրավասու ազգային մարմինների հետ աշխատելու համար,

—իրավասու մարմիններից պահանջել խստացնել տվյալ սահմանային հսկողության անցակետում, մաքսային պահեստում, ազատ տնտեսական գոտում կամ ազատ մաքսային պահեստում իրականացվող ստուգումները:

Ելնելով Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրություններից՝ ներգրավված անդամ պետությունը պետք է նպատակակետ հանդիսացող անդամ պետության խնդրանքով խստացնի տվյալ սահմանային հսկողության անցակետում, մաքսային պահեստում, ազատ տնտեսական գոտում կամ ազատ մաքսային պահեստում իրականացվող ստուգումները:

Նպատակակետ հանդիսացող անդամ պետությունն իր կողմից կարող է խստացնել այդ վայրերից եկող կենդանիների ստուգումները:

Երկու անդամ պետություններից մեկի պահանջով, երբ խախտումները հաստատվում են հինգերորդ ենթապարբերության առաջին պարբերություն նշված տեսչական ստուգմամբ, Հանձնաժողովը պետք է 28-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի հիման վրա ձեռնարկի անհրաժեշտ միջոցները: Այդ միջոցները պետք է հաստատվեն կամ վերանայվեն հնարավորինս շուտ՝ նույն ընթացակարգի համաձայն:

2. Սույն Հրահանգը չի ազդում իրավասու մարմինների որոշումների դեմ անդամ պետություններում գործող օրենքների համաձայն բողոքարկելու իրավունքների վրա:

Իրավասու մարմնի կողմից կայացրած որոշումների եւ այդ որոշումների կայացման պատճառների մասին կտեղեկացվի այդ որոշումներում ներգրավված բեռի համար պատասխանատու անձին կամ նրա ներկայացուցչին:

Եթե բեռի համար պատասխանատու շահագրգիռ անձը կամ նրա ներկայացուցիչը պահանջ է ներկայացնում, ապա վերոնշյալ որոշումները եւ դրանց ընդունման պատճառները իրենց գրավոր են հանձնվում՝ նշելով մանրամասներ բողոքարկելու իրավունքների եւ դրանց համար կիրառելի ընթացակարգերի եւ ժամանակային սահմանափակումների մասին, որոնցից իրենք կարող են օգտվել սահմանի հսկողության անցակետի տեղակայման անդամ պետությունում գործող օրենքի համաձայն:

3. Սույն հոդվածի կիրառման մանրամասն կանոններն ընդունվում են 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

## **Հոդված 26**

1. Յուրաքանչյուր անդամ պետություն կազմում է երրորդ երկրներից բերվող կենդանիների անասնաբուժական ստուգումներ անցկացնող աշխատակազմի փոխանակման ծրագիր:

2. Հանձնաժողովն ու անդամ պետությունները համակարգում են 1-ին պարբերության մեջ նշված ծրագրերը Անասնաբուժության գծով մշտական կոմիտեի շրջանակում:

3. Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ 2-րդ պարբերության մեջ նշված համակարգման արդյունքում իրականացվող ծրագրերի կատարման հնարավորություն ստեղծելու համար:

4. Յուրաքանչյուր տարի Անասնաբուժության գծով մշտական կոմիտեում ծրագրերի իրականացումը վերանայվում է անդամ պետությունների կողմից կազմված հաշվետվությունների հիման վրա:

5. Անդամ պետությունները հաշվի են առնում ձեռք բերված փորձառությունը՝ փոխանակման ծրագրերը կատարելագործելու եւ զարգացնելու համար:

6. Համայնքի կողմից կարող է կատարվել ֆինանսական ներդրում՝ փոխանակման ծրագրերի զարգացման արդյունավետությունը խթանելու համար: Նման ներդրման մանրամասն կանոնները եւ Եվրոպական համայնքների ընդհանուր բյուջեից մասհանվող գումարի չափը սահմանվում են Խորհրդի «Անասնաբուժության ոլորտում ծախսերի մասին» 1990 թվականի հունիսի 26-ի 90/424/ԵՏՀ որոշման մեջ<sup>25</sup>:

7. Անհրաժեշտության դեպքում ընդունվում են 1-ին, 4-րդ եւ 5-րդ պարբերությունների կիրառման համար մանրամասն կանոններ՝ 29-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

## **Հոդված 27**

Անդամ պետությունները պետք է ապահովեն սահմանային հսկողության անցակետերում նշանակված անասնաբուժական պետական տեսուչների մասնակցությունը սույն հոդվածում նշված հատուկ վերապատրաստման ծրագրերում:

Հանձնաժողովը, 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն, կկազմի ուղեցույցներ՝ այսպիսի ծրագրերի համար:

Հանձնաժողովը տարին առնվազն մեկ անգամ սեմինարներ կանցկացնի ծրագրերին մասնակցող անձանց համար՝ դրանց համակարգված լինելն ապահովելու նպատակով:

Սույն հոդվածով նախատեսված միջոցները ֆինանսավորվում են 90/424/ԵՏՀ որոշման III բաժնի համաձայն:

---

<sup>25</sup> 26 )ՊՏ L 224, 18.08.1990թ., էջ 19: Խորհրդի 94/370/ԵՀ որոշմամբ վերջին անգամ փոփոխված որոշում (ՊՏ L 168, 02.07.1994թ., էջ 31):

## ԳԼՈՒԽ IV

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

#### Հոդված 28

Սույն հոդվածով նախատեսված ընթացակարգին հղում կատարելու դեպքում Խորհրդի 68/361/ԵՏՀ որոշմամբ նշանակված Անասնաբուժության գծով մշտական կոմիտեն<sup>26</sup> որոշումներ է կայացնում 89/662/ԵՏՀ հրահանգի 17-րդ հոդվածում սահմանված կանոններին համապատասխան:

#### Հոդված 29

Սույն հոդվածով նախատեսված ընթացակարգին հղում կատարելու դեպքում Խորհրդի 68/361/ԵՏՀ (5) որոշմամբ նշանակված Անասնաբուժության գծով մշտական հանձնաժողովը որոշումներ է կայացնում՝ համաձայն 89/662/ԵՏՀ հրահանգի 18-րդ հոդվածում շարադրված կանոնների:

#### Հոդված 30

II եւ III հավելվածները կարող են լրացվել 29-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

#### Հոդված 31

Սույն Հրահանգով չի սահմանափակվում մաքսային կանոններից բխող պարտավորությունները:

---

<sup>26</sup> 27)ՊՏ L 255, 18.10.1968թ., էջ 23:

### **Հոդված 32**

Անդամ պետությունները կարող են օգտվել սույն Հրահանգի իրականացման համար 90/424/ԵՏՀ որոշման 38-րդ հոդվածով նախատեսված Համայնքային ֆինանսական աջակցությունից:

### **Հոդված 33**

90/675/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 1999 թվականի հունիսի 30-ից:

90/675/ԵՏՀ հրահանգի հիման վրա ընդունված ակտերը պետք է մնան ուժի մեջ այնքան ժամանակ, քանի դեռ սույն Հրահանգի հիման վրա չեն ընդունվել դրանք փոխարինող դրույթներ:

Սույն Հրահանգի հիման վրա ընդունված ցանկացած ակտում, անհրաժեշտության դեպքում, նշվում է այն ամսաթիվը, որից սկսած, այդ հրահանգի դրույթները կփոխարինեն 90/675/ԵՏՀ հրահանգի հիման վրա ընդունված ակտի համապատասխան դրույթներին:

Ուժը կորցրած Հրահանգին հղումները հասկացվում են որպես հղումներ սույն Հրահանգին եւ համեմատվում են IV հավելվածով սահմանված համեմատական աղյուսակին համապատասխան:

### **Հոդված 34**

1. Անդամ պետությունները պետք է ընդունեն եւ հրապարակեն սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը նախքան 1999 թվականի հուլիսի 1-ը: Նրանք դրա մասին անհապաղ տեղեկացնում են Հանձնաժողովին:

Նրանք այս դրույթները կիրառում են 1999 թվականի հուլիսի 1-ից:

Երբ անդամ պետություններն ընդունում են նշված ակտերը, դրանք պետք է սույն Հրահանգին կատարվող հղում պարունակեն կամ պետք է ուղեկցվեն նման հղումով՝ իրենց պաշտոնական հրապարակման պահին: Նման հղում կատարելու կարգն ընդունվում է անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ներպետական իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

### **Հոդված 35**

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

### **Հոդված 36**

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

**▼M2**

## ՀԱՎԵԼՎԱԾ I

### 1 -ԻՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԹՎԱՐԿՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

1. Բելգիայի Թագավորություն:
2. Բուլղարիայի Հանրապետություն:
3. Չեխիայի Հանրապետություն:
4. Դանիայի Թագավորություն՝ բացառությամբ Ֆարերյան կղզիների եւ Գրենլանդիայի:
5. Գերմանիայի Դաշնային Հանրապետություն:
6. Էստոնիայի Հանրապետություն:
7. Հունաստանի Հանրապետություն:
8. Իսպանիայի Թագավորություն՝ բացառությամբ Սեուտայի եւ Մելիլյայի
9. Ֆրանսիայի Հանրապետություն:
10. Իռլանդիա:
11. Իտալիայի Հանրապետություն:
12. Կիպրոսի Հանրապետություն:
13. Լատվիայի Հանրապետություն:
14. Լիտվայի Հանրապետություն:
15. Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն:
16. Հունգարիայի Հանրապետություն:
17. Մալթայի Հանրապետություն:
18. Եվրոպայում Նիդեռլանդների Թագավորություն:
19. Ավստրիայի Հանրապետություն:
20. Լեհաստանի Հանրապետություն:
21. Պորտուգալիայի Հանրապետություն:
22. Ռումինիա:



23. Սլովենիայի Հանրապետություն:

24. Սլովակիայի Հանրապետություն:

25. Ֆինլանդիայի Հանրապետություն:

26. Շվեդիայի Թագավորություն:

27. - Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն:

**▼B**

**ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՆՑԱԿԵՏԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՊԱՀԱՆՁՆԵՐ**

Համայնքի կողմից հաստատվելու համար սահմանային հսկողության անցակետերը պետք է ունենան՝

- Փաստաթղթերն ստուգելու համար անհրաժեշտ անձնակազմը, արտադրանքին կից ներկայացված (Համայնքի օրենսդրությամբ սահմանված՝ հանրային եւ կենդանիների առողջության վկայագրեր կամ ցանկացած այլ փաստաթուղթ),
- սահմանային հսկողության անցակետով անցնող արտադրանքի քանակության հետ կապված՝ անասնաբուժական եւ օժանդակ անձնակազմի բավարար թիվ, որոնք վերապատրաստվել են՝ արտադրանքի համապատասխանությունը կից փաստաթղթերին ստուգելու եւ արտադրանքի յուրաքանչյուր խմբաքանակի համար պարբերական փաստացի ստուգումներ անցկացնելու համար,
- բավարար թվով անձնակազմ՝ տվյալ սահմանային հսկողության անցակետ ներկայացված արտադրանքի խմբաքանակից պատահական նմուշներ վերցնելու եւ դրանք փորձարկելու համար,
- բավական ընդարձակ մասնաշենք՝ անասնաբուժական ստուգումների համար պատասխանատու անձնակազմի համար,
- հիգիենայի կանոնների պահպանմամբ համապատասխան մասնաշենք՝ սույն Հրահանգի համաձայն ընթացիկ անալիզներն իրականացնելու եւ նմուշներ վերցնելու համար,
- համայնքային կանոններով սահմանված ընթացիկ ստուգումների համար նմուշներ վերցնելու եւ դրանք փորձարկելու համար համապատասխան տարածք եւ հարմարություններ.
- մասնագիտացված լաբորատորիայից օգտվելու ծառայություններ, որոնց միջոցով հնարավոր է անցկացնել անցակետում վերցված նմուշների հատուկ փորձաստուգումներ.
- մասնաշենքեր եւ սառնարանախցեր անալիզների համար վերցված բեռների որոշակի խմբաքանակի եւ այն արտադրանքի համար, որոնց ազատ շրջանառության համար բացթողումը չի թույլատրվել տվյալ սահմանային հսկողության անցակետի գլխավոր անասնաբույժի կողմից,

—համապատասխան սարքավորումներ տեղեկատվության արագ փոխանակման համար, մասնավորապես՝ այլ սահմանային հսկողության անցակետերի հետ (90/425/ԵՏՀ հրահանգի 20-րդ հոդվածով նախատեսված համակարգչայնացված համակարգի կամ Ռեժիմների փոփոխության ծրագրի միջոցով)։

—այն ձեռնարկության ծառայությունները, որը որակավորված է իրականացնելու արտադրանքի՝ 90/667/ԵՏՀ հրահանգով նախատեսված մշակումը։

**ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՓԱՍՏԱՑԻ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ**

Կենդանական ծագում ունեցող արտադրանքի փաստացի ստուգումների նպատակը դրանց համապատասխանությունն ապահովելն է անասնաբուժական վկայագրում կամ փաստաթղթում նշված նպատակին. երրորդ երկրի կողմից հաստատված ծագման երաշխիքները պետք է համապատասխանաբար ստուգվեն՝ ապահովելով, որ արտադրանքի հետագա փոխադրման ժամանակ չի փոփոխվել դրանց նախնական երաշխավորված վիճակը.

- ա) զգայական ֆունկցիաների հետազոտության միջոցով. հոտ, գույն, խտություն, համ,
- բ) պարզ փաստացի կամ քիմիական հետազոտություններ. կտրատում, հալեցում, ջերմամշակում,
- գ) լաբորատոր թեստեր հայտնաբերելու.

մնացորդները,

ախտածիհները,

հավելանյութերը,

փոփոխությունների մասին ապացույցներ:

Անկախ արտադրատեսակից՝ պետք է իրականացվի հետեւյալը.

- ա) փոխադրամիջոցների եւ դրանցում առկա պայմանների ստուգում, մասնավորապես՝ սառնարանային շղթայի ցանկացած խափանում կամ թերություն վերհանելու համար,
- բ) պետք է համեմատել բեռի իրական կշիռը անասնաբուժական վկայագրում կամ այլ փաստաթղթում նշվածի հետ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ կշռել ամբողջ ուղեբեռը;
- գ) փաթեթավորման համար նախատեսված նյութերը եւ փաթեթվածքների բոլոր նշանները (կնիքները, պիտակները) պետք է ստուգվեն՝ դրանց համապատասխանությունը Համայնքի օրենսդրությանն ապահովելու համար,
- դ) պետք է ստուգվի Համայնքի օրենսդրությամբ պահանջվող ջերմաստիճանը՝ փոխադրման ժամանակ այդ ջերմաստիճանի պահպանումն ապահովելու համար,

ե) փաթեթվածքների ամբողջական փաթեթները կամ, չմանրակշռված արտադրանքի դեպքում, նմուշները պետք է հետազոտվեն՝ նախքան զգայական ֆունկցիաների հետազոտության եւ փաստացի, քիմիական ու լաբորատոր թեստերի անցկացումը:

Թեստերը պետք է իրականացվեն բեռից վերցված նմուշների ամբողջ տեսականու համար, որը պետք է անհրաժեշտության դեպքում մասնակիորեն բեռնաթափվի՝ համոզվելու համար, որ բեռն ամբողջությամբ տեղ է հասել:

Հետազոտությունը պետք է ներառի բեռի առանձին իրերի կամ փաթեթների 1%-ը՝ նվազագույնը երկու իր/փաթեթ, առավելագույնը՝ 10 իր/փաթեթ:

Այնուամենայնիվ, պայմանավորված արտադրանքով եւ հանգամանքներով, անասնաբուժության գծով պատասխանատու մարմինները կարող են պահանջել ավելի հանգամանալից ստուգումների անցկացում:

Չփաթեթավորված արտադրանքի դեպքում ամբողջ բեռի տարբեր մասերից պետք է վերցվեն առնվազն հինգ նմուշ:

զ) ոչ պարբերաբար անցկացվող լաբորատոր թեստերի դեպքում, որոնց անմիջական արդյունքները տեսանելի չեն եւ հանրային ու կենդանիների առողջության անմիջական վտանգ առկա չէ, բեռը կարող է բաց թողնվել շրջանառության համար:

Այնուամենայնիվ, եթե լաբորատոր թեստերն անցկացվել են խախտման կասկած ունենալու պատճառով կամ նախկինում իրականացված թեստերը դրական արդյունքներ են արձանագրել, ապա բեռը կարող է բաց չթողնվել, եթե փորձաստուգման արդյունքները բացասական են,

է) բեռը պետք է ամբողջովին բեռնաթափվի փոխադրամիջոցից միայն հետեւյալ դեպքերում.

- բեռնումը կատարվել է այնպես, որ ամբողջ ուղեբեռի ստացումն անհնար է միայն մասնակի բեռնաթափման դեպքում,
- փորձաստուգումների արդյունքում խախտումներ են բացահայտվել,
- նախորդ բեռի հետ կապված խախտումներ են արձանագրվել,
- անասնաբուժական պետական տեսուչը խախտումներ է կասկածում,

ը) փաստացի ստուգումն ավարտելուց անմիջապես հետո իրավասու մարմինը պետք է հաստատի ստուգումը՝ փակելով եւ պաշտոնապես կնքելով բոլոր բացված փաթեթները եւ վերակնքելով բոլոր կոնտեյներները՝ կնիքի համարը սահմանի տարանցիկ փաստաթղթում գրանցելով:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

90/675/ԵՏՀ հրահանգ	Սույն Հրահանգը
Հոդված 1	Հոդված 1
2(1) հոդված	2(1) հոդված
2(2)(ա) հոդված	2(2)(ա) հոդված
2(2)(բ) հոդված	2(2)(բ) հոդված
2(2)(գ) հոդված	2(2)(գ) հոդված
2(2)(դ) հոդված	2(2)(դ) հոդված
2(2) (ե) հոդված	2(2) (ե) հոդված
2(2)(զ) հոդված	2(2)(զ) հոդված
2(2)(է) հոդված	2(2)(է) հոդված
2(2) (ը) հոդված	2(2)(ժա) հոդված
Հոդված 3	—
Հոդված 4	—
Հոդված 5	Հոդված 12
Հոդված 6	Հոդված 13
Հոդված 7	—
8(1) հոդված	—
8(2) հոդված	4(4)(բ) հոդված

8(3) հոդված	Հոդված 10
8(4) հոդված	Հոդված 9
Հոդված 9	Հոդված 6
Հոդված 10	—
Հոդված 11	—
Հոդված 12	Հոդված 11
Հոդված 13	Հոդված 14
Հոդված 14	Հոդված 16
Հոդված 15	—
Հոդված 16	Հոդված 17
Հոդված 17	Հոդված 18
Հոդված 18	Հոդված 19
Հոդված 18a	Հոդված 21
Հոդված 19	Հոդված 22
Հոդված 20	Հոդված 23
Հոդված 21	Հոդված 25
Հոդված 22	Հոդված 26
Հոդված 23	Հոդված 28
Հոդված 24	Հոդված 29
Հոդված 25	Հոդված 30



Հողված 26	Հողված 31
Հողված 27	—
Հողված 28	—
Հողված 29	—
Հողված 30	—
Հողված 31	Հողված 32
Հողված 32	Հողված 34
Հողված 33	Հողված 36
Հավելված I	Հավելված I
Հավելված II	Հավելված II
—	Հավելված III